ՀԱՅ ՅԵՂԱՓ. ԴԱՇՆԱԻՑՈՒԹՅՈՒՆ

Գրադարան «Աշխատաւորի» № 9

Վ. ԽՈՐԷՆԻ

ԵՐԲ ԵՒ ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ԼԻՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

ԹԻՖԼԻՍ
Տպարան «Աշխատաւորի»
1918

ՀԱՅ ԺԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Գրադարան «Աշխատաւոր»-ի № 9

329.14(47-925)
Խ-82

Վ. ԽՈՐԷՆԻ

ԵՐԲ ԵՒ ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ԼԻՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱՏՈՒՆ

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

14394

Թիֆլիս
Տպարան «Աշխատաւոր»
1917



ԵՐԲ ԵՒ Ի՞ՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ԼԻՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Սոցիալիզմ և սոցիալիստական յեղափոխութիւն—ահա երկու լրացուցիչ իրարից անբաժանելի գաղափարներ։ Դրանք այնքան սերտօրէն կապուած են իրար հետ, որ մտածելով մէկի մասին՝ ինքն իրեն մտածում ես և միւսի մասին։ Եթէ հետաքրքրական է՝ թէ ինչ բան է «սոցիալիզմը» նոյնքան հետաքրքրական է իմանալ թէ ե՞րբ և ինչպէս պէտք է լինի «սոցիալիստական յեղափոխութիւնը»—այն մեծ հասարակական յեղաշրջումը, որ պէտք է իրականացնի սոցիալիստական հասարակակարգը։ Հետևաբար սոցիալիզմով հետաքրքրուողն ուշ չանալը-

դիր մարդը պէտք է աշխատէ շատ որոշակի պարզել, իր համար, սահմանել նաև սոցիալիստական կամ «սոցիտլական» յեղաշրջման գաղափարը։

Գաղափարի սահմանումը, ըմբռնողութիւնը որոշումը այս դէպքում ևս, և տեսալ դէպքում աւելի՝ քան սովորաբար, ոչ միայն լոկ տեսական, այլ և գերազանցօրէն գործնական արժէք ունի։ Դա, այսպէս ասած, ոչ միայն «սկզբունքային», այլև «տաքտիքական» նշանակութիւն ունի։ Եւ, որ գլխաւորն է, տեսականն ու գործնականը, սկզբունքայինն ու տաքտիքականը տեսալ խնդրում համարեա անբաժանելի են իրարից։

Եւ իրօք։ Ինչպէս էք բաժանում իրարից սոցիալիզմն ու սոցիալիստական յեղափոխութիւնը։ Եթէ սոցիալիզմը մի նպատակաւոր յարատև շարժում, բարդ գործողութիւն (պրոցէս)է, ապա ինչպէս բաժանել սոցիալիստական

չարժումը իր «վերջին» յեղաշրջման գործողութիւնից։ Եւ վերջապէս, շատ հետաքրքրական է իմանալ, արդեօք, սոցիալիզմը մի վերջին յեղաշրջումով թէ ասիճանաբար պէտք է իրականանայ։ Սոցիալիզմը հետզհետէ հասարակական կեանքը կերպարանափոխող մի «շարժումն» է՝ և թէ մի «վերջնական» նպատակ, հասարակական կեանքի մի որոշ իդէալական տիպար, որ պէտք է մի «վերջնական» յանկարծակի «յեղաշրջումով» իրականացուի։ Ուրեմն և սոցիալիստական յեղափոխութիւնը իբրև մի ասիճանական բարեփոխութիւն՝ և թէ յանկարծակի կերպարանափոխութիւն պէտք է հասկանալ։

Սրանք շատ էական ու հետաքրքրական հարցեր են յեղափոխականի ու սոցիալիստի համար։ Այդ հարցերի այսպէս կամ այնպէս ըմբռնելուց է կախուած սոցիալիստական կուսակ-

ցութիւնների ամբողջ սոցիալական քաղաքականութիւնը։ Այստեղ է, որ մտածելակերպը ամբողջովին որոշում է գործելակերպը։ Մարդիկ ի՛նչպէս հասկանում են, այնպէս էլ գործում են։ Այստեղ է, որ տեսականի սխալանքները կարող են միանգամայն ճակատագրական լինել գործնականի համար։

Մի բոպէ ընդունենք, որ որոշ յեղափոխական կուսակցութիւն սխալ է շմբռնել՝ թէ ամբողջ սոցիալիստական (ուրեմն և առհասարակ սոցիալական) շարժման էութիւնը, դրա ներքին օրէնքները, շարժիչ ուժերը և թէ սոցիալիստական յեղափոխութեան երբ և ինչպէս կատարելու հանգամանքը։ Ակներև է, թէ որպիսի սխալանքներ, որպիսի ճակատագրական վրիպումներ կարող է կատարել այդպիսի յեղափոխական կուսակցութիւնը։ Նա կարող է տասնեակ տարիներով յե-

տաձգել կամ ծանր կորուստներով վտանգել աշխատաւորութեան ազատագրութեան գործը։

Մեզ համար անկասկածելի ճշմարտութիւն է ոչ միայն այն միտքը՝ թէ մարդիկ ինչպէս ապրում՝ այնպէս էլ մտածում են, այլ և այն միտքը՝ թէ ինչպէս մարդիկ մտածում—փիլիսոփայում՝ այնպէս էլ ապրում ու գործում են։ Մենք մեծ նշանակութիւն ենք տալիս առհասարակ սոցիալական և մասնաւորապէս սոցիալիստական շարժման այս կամ այն ըմբռնողութեան։ Մենք համոզուած ենք, որ հասարակական-քաղաքական կեանքում գործող յեղափոխական կազմակերպութիւնների մտածելակերպը կարող է վերին աստիճանի ֆետակար լինել սոցիալիստական շարժման համար։

Եւ տարաբախտաբար մեր այս կասկածանքները պատմական իրողութիւններ են արդէն։ Սոցիալիստա-

կան շարժման առաջնորդիչ ուժերի և ներքին օրէնքների սխալ ու միակողմանի ըմբռնողութիւնը շատ բացառական ու կորստաբեր հետևանքներ է ունեցել աշխատաւոր դասակարգի համար։

Տարաբախտաբար սոցիալիզմի «գիտական» հիմնաւորման հէնց առաջին օրերից այդ շարժումը չեղոքի և մասամբ ցնորական ընթացք է ընդունել չնորհիւ վարդապետների և առաջին առաքեալների միակողմանի և դատանամոլ մատածողութեան։

ՄԱՐՔՍԻԶՄ ԵՒ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԾԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

--

«Մարքսիզմը», որ սոցիալիզմի գերիշխող ըմբռնումն է եղել՝ մի անօրինակ ու տարօրինակ «գիտական» ուղղափառութեամբ և հասարակական-պատմական կեանքի թերի ըմբռնո-

ղութեամբ երկու «հակայեղափոխական» հետևանքներ է ունեցել. գործնականում դա կամ յարմարապաշտ կրաւորականութեան է վերածուել, կամ էլ՝ անիշխանական—ցնորապաշտ «յեղափոխականութեան»։ Առաջնի տիպար օրինակն է գերման-անգլիական յարմարապաշտ սոցիալ դեմոկրատիան, իսկ երկրորդի օրինակը—բոմանոսլաւոնական սոցիալ-դեմոկրատիան։

Միևնոյն վարդապետութիւնից նոյն „դիալեքտիկական“ մարքսիզմից են ծնուել այդ երկու հակոտնեայ ու տարամերժ հոսանքները—Ռուսաստանում՝ մենշեիզմն ու բոլշեիզմը, Եւրոպայում Կաուտսկիների սոցիալ-դեմոկրատիան և Սուրէլների յեղափոխական սինդիկալիզմը։ Երկուսի աղբիւրն ևս նոյն «դիալեքտիկան»—կեղծ դիտական և ցնորապաշտ, ցնորքներ սնուցանող մտածելակերպն է։ Միևնոյն վարդապետութիւնն է, որ երկրէ երկիր, ազգէ

ազդ ան ցնելով կծրպարանափոխուել է անճանաչելիութեան չափ մինչ այն աստիճանի, որ այսօր մենք երկու „Մարքսիզմ“ ունինք—մէկը յարմարապաշտ ռէֆորմիստական՝ միւսը—անիշխանական սինդիկալիստական երկուսն էլ սակայն հաւասարապէս ցընորապաշտ։

Տարօրինակ է, բայց փաստ է ինչպէս «գիտութեան» և „դոգմայի“, այդպէս նաև իրապաշտութեան“ (ռէալիզմի) և ցնորապաշտութեան (ուտոպիզմի) արտաւոց զուգորդութիւնը մարքսիզմի մէջ։ Անհաւատալի է, որ մի «բացարձակ» գիտականութեան յաւակնութիւն ունեցող ուսմունք այսքան ցնորականութիւն անուցանէր իր մէջ։ Սակայն ով որ ծանօթ է մարքսիստական «դիալեքտիկական» մտածողութեան, նրա համար զարմանալի չէ այդ առերևոյթ հակասական, անասկանելի երևոյթը։ Դա միանգամայն

հասկանելի է դառնում, երբ քննում ենք այդ աշխարհայեացքի էութիւնը — „դիալիկտիկան։"

„Դիալիքտիկայից" կամ դիալեքտիկական մտածելակերպից է առաջանում ցնորապաշտութիւնը մարքսիզմի մէջ։

Այնեն — բնական թէ սոցիալական — շարժման այդ ճագատագրապաշտ (ֆատալիստական) և տարերային ըմբռնողութիւնը ինքնին արդէն ցնորակայնութեան պտղարտ հող է ներկայանում։ Եւ իրօք, մտածեցէք Մարքս-Էնգելսեան «դիալեքտիկայով» և կտեսնէք որքան դիւրին ու գեղեցիկ է կատարուում ամեն բան աշխարհում։

Ամեն բան կատարուում է դիալեկտիքական օրէնքներով ըստ այդ տեսակէտի. հասարակական կեանքն էլ է այդպէս դարգանում. — ամեն մի երևոյթ, դրութիւն (թէզ) ծնում է իրեն մի հակառակ դրութիւն (հակադրու-

թիւն-անտիթէզ). սա հակադրելով առաջին դրութեանը ժխտում, բացասում է նրան ու ստեղծում մի նոր կատարեալ դրութիւն (համադրութիւն առաջին երկու դրութիւնների սինթէզ)։ Համադրութիւնը կոչւում է նաև «բացասման բացասումն» որովհետև դա նախորդի բացասման արդիւնքն է։

Երևակայեցէք, որ ամեն ինչ ճիշտ այսպէս է կատարւում, որ սոցիալիստական չարժումն էլ դիալեքտիկայի այդ եռաստիճան մոգական օրէնքով և կատարւում։ Օրինակ այսպէս. կայ մի տեսակ սոցիալական երևոյթ կամ «դրութիւն», որ կոչւում է „մասնաւոր անհատական աշխատանքով ձեռք բերած մասնաւոր սեփականութեան տնտեսութիւն“ (միջնադարեան արհեստաւորութիւնը)։ Դրան հակադրւում է դրանից զարգացած երկրորդ դրութիւնը—«հասարակական և ուրիշի աշխատանքով ստեղծած մասնաւոր

սեփականութեան տնտեսութիւնը» (արդի կապիտալիստական տնտեսութիւնը). այս երկրորդ դրութիւնը բացառում է նախորդ դրութիւնը, այսինքն սովորական „բարբառով“ ասենք խոշոր տնտեսութիւնը կլանում է մանր տնտեսութիւնը, կապիտալիզացիա է կատարւում և այս երևոյթը իր զարգացմամբ ինքնաբերաբար յանգում է երրորդ դրութեան կամ համադրութեան-սոցիալիզմի։

Եւ ճիշտ այսպէս.— 1) մասնաւոր անհատական տնտեսութիւն, 2) կապիտալիզմ և... 3) սոցիալիզմ։ Մէկը բըղխում է միւսից «ընտանիքաժեշտօրէն», «ճագատագրականօրէն», «ինքն իրեն», «անխուսափելիօրէն», «տրամաբանօրէն», («դիալեքտիկօրէն») և այլն և այլն։ Այսինքն՝ սոցիալիզմի գալուստն ու յաղթանակը մի տարերային ու բացարձակ, բնական ու տրամաբանական անհրա-

ժեչտութիւն է ըստ մարքսիզմի, ըստ «դիալեքտիկական» պատմահայեցողութեան։ Կապիտալիստական տնտեսութեան «ներքին (իմանենտ) օրէնքների խաղի» արդիւնքն է դա—ճագատագրականօրէն անխուսափելի։

Պարզ չէ՝ թէ որքան ցնորքներ կարող են ծնուել ու առատօրէն սնուել այդ հողի վրայ։ Պարզ չէ՝ որպիսի ցնորապաշտութիւն կարող էր զարգանալ այդ անօրինակ ու արտառոց «դիտական» ֆատալիզմից (ճակատագրապաշտութիւնից)։ Պարզ է և միշտ այդպէս է. ուր գիտութիւնը մի ապօրինի կենակցութեամբ զբաղուում է դոգմայի, ոչ գիտական մտածողութեան հետ (Մարքսեան տնտեսական մատերիալիզմ և Հեգելեան իդէալիստական դիալեկտիկա)—արդիւնքը միշտ էլ լինում է մի վատասերած զանգ—խառնդապաշտութիւն (միստիցիզմ) կամ ցնորապաշտութիւն (ուտոպիզմ։)

Ահա այդ „գիտական“ ցնորապաշտութեան պտուղները, մարքսիստական իրապաշտութեան (բէալիզմի) հողի վայ ծլած ու ծաղկած ցնորքի ծաղիկները։

— «Սոցիալական հարցը այս (19-րդ) դարու հարց է և դրա վերջին տասնամեակում, ամենայն հանականութեամբ մեծ վճռական փոխութիւններ տեղի կունենան»։

— «Գերմանական սոցիալ դեմոկրատիան սյնպիսի դիրք է բռնել, որը կարճ ժամանակում կապահովի նրա համար քաղաքական իշխանութեան նւաճումը»։

— «Մեր վերջին նպատակների իրականացումը այնքան մօտ է, որ այս դահլիճում ներկայ եղողներից քչերն են միայն, որ չեն տեսնի այդ օրերը»։

— «Այն կոսակցութիւնը (սոցիալ-դեմոկրատիան), որ փոթորկող ալիքների նման անվստաքէն անցնում է

բոլոր պատնէշներից և ծաւալւում է լայն ալիքներով դէպի քաղաքներն ու գիւղերը, մինչև ամենայետադիմական գիւղատնտեսական անկիւնները, այդ կուսակցութիւնը հասել է արդէն այն կէտին, ուր նա համարեա թէ մաթեմաթիքական ճշտութեամբ կարող է որոշել այն ժամանակը, երբ կհասնի նրա տիրապետութիւնը»։

—„Եթէ ծագի ահաւոր համաշխարհային պատերազմը՝ մենք մի երկու տարուց յետոյ հասած կլինինք մեր նպատակին»։

—«Հակառակ դէպքում, հետևեալ ընտրութիւններին մեր կուսակցութիւնը այնպիսի դիրք կընդունի, որ կհարկադրի զինադադար խնդրել ամեն մի կուսակցութեան»։ «Եւ եթէ դէպքերը այդ ուղղութեամբ գնան՝ 1898 թ. մեր կուսակցութիւնը կարող է իշխանութեան հասնել։

—«Նոր Ֆրանսիական յեղափոխու-

A I 14394

թիւնը ստիպուած կլինի անմիջապէս թողնել ազգային հողը և իրեն ենթարկել ամբողջ Եւրոպան. միայն այս ճանապարհով կիրականանայ 19-րդ դարի սոցիալական յեղափոխութիւնը.

Այսպէս է արամաբանում մարքսիզմը, դեռ էս 48 թ.—90 թուականները։ Եւ արամաբանում էր առևրևոյթ շատ հիմնաւոր, շատ առարկայական կերպով. կապիտալիզմը ծաւալւում ու յաղթանակում էր օրէցօր, դա առաջ էր բերում զանգուածային թշուառացումներ. միջին սեփականատէրերին դարձնում էր սեփականազուրկ (պրոլետարիատ). ծնում էր ազէտաւոր ճգնաժամեր. արդիւնաբերութեան ուժերը չէին համապատասխանում արդիւնաբերութեան կազմակերպութեան— դրա հասարակական «ձև»-ին, և թւում էր բոլոր-ին, որ մի օր յարաճուն ուռճացող ներքին պէտք է բնականօրէն, անխուսափելիօրէն խորտակէր,

ԼՈՒԿ ՍԱՍ ԳՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

փչրէր իր արտաքին ձևը, կապիտալիստական տարականոն մնտեսութիւնը պէտք է ոչնչացնէր իր հասարակական ձևը։

Կապիտալիստական հասարակական դրութեան ինքնաբացատման և սոցիալիստական համադրութեան տնտեսութեան դասական արտայայտութիւնը տուել է Մարքսը.

— «Ի՞նչպէս արդօրէն այդ (սեփական աշխատանքի արդիւնք մասնաւոր սեփականութիւնը ուրիշի աշխատանքի շահագործման վրայ հիմնուած կապիտալիստական մասնաւոր սեփականութեան) փոխուելու գործողութիւնը բուսականաչափ քայքայեց հին հասարակութիւնը թէ լայնութեամբ և թէ խորութեամբ. ի՞նչպէս արդօրէն բանուորները դարձան պրոլետարներ, իսկ նրանց աշխատանքի պայմանները — կապիտալ. — ինչպէ՞ս արագ արդիւնադրութեան կապիտալիստական եղանակը

պահպանուում է միայն իրերի տնտեսական դրութեամբ ինչպէս է՝ օրինակ՝ աշխատանքը յետագայում հասարակական դառնում, և հողն ու արդիւնաւորութեան միջոցները համայնօրէն շահագործուում. ուրիշ խօսքով, թէ ինչպէս է մասնաւոր սեփականութեան արտագրաւումը յետագայում նոր ձև ընդունում։ Այժմ այլևս սեփական տնտեսութեամբ պարապող անկախ բանուորին չէ. որ պէտք է սեփականազրկել, այլ բազմաթիւ բանուորների սեփականազրկող կապիտալիստին։ Այս սեփականազրկումը (էքսպրոպրիացիան) կատարուում է կապիտալիստական արդիւնաւորութեան առանձնատուկ ներքին (իմմանենտ) օրէնքների խաղով—կապիտալների կենտրոնացումով։ Ամեն մի կապիտալիստ սպանում է մի շարք ուրիշներին։ Այս կենտրոնացումը, այսինքն շատ կապիտալիստների սեփականազրկումը քչերի

միջոցով ինքնին արդէն աւելի ու աւելի է զարգացնում բանուորական աշխատանքի կոոպերատիւ ձևը—գիտութեան գիտակցական և տեխնիքական կիրառումը, հողի կանոնաւոր ու մասին չահագործելը, աշխատանքի միջոցների միայն համայնական օգտագործումը և բոլոր արդիւնագործական միջոցների իբրև համայնական կանոնաւորուած աշխատանքի միջոցների տընտեսող գործածութիւնը։ Կապիտալի տէրերի չարունակաբար նուազող թուի հետ, որ յափշտակում և մենաշնորհ են դարձնում այդ յեղաշրջման գործողութեան բոլոր առաւելութիւնները՝ աճում են թշուառութիւնը, ճնշումը, ստրկացումը, ստրացումը, չահագործումը. բայց դրա հետ աճում է նաև ցասումը բանուոր դասակարգի, որ միշտ ապէս մեծանում ու հէնց կապիտալիստական արդիւնագործութեան գործողութեան միջոցով սովորում, մարդ-

ւում, միանում ու կազմակերպւում է։ Կապիտալը կաշկանդիչ կապանք է դառնում արդիւնագործութեան այն եղանակի համար, որ զարգացել է իր հետ և իր ազդեցութեան տակ։ Արդիւնագործութեան միջոցների կենտրոնացումն ու աշխատանքի հասարակականացումն հասնում են այն աստիճանին, երբ նրա՛ք այլ ելս չեն կարողանում տանել իրենց կապիտալիստական կեղեւը։ Սա հեղուում է ինքն իրեն—sie wird gesprengt: Սփում է կապիտալիստական մասնաւոր սեփականութեան ժամը։ Սեփականազրկողները սեփականազրկւում են» («Կապիտալ», եր. 673)։

Այսպէս։ Ամեն ինչ կատարւում է «ինքն իրեն», ինքնաբերաբար։ Վերջնական և ընդհանուր սեփականազրկումը—սոցիալիստական յեղափոխութիւնը կատարւում է կապիտալիստական արդիւնագործութեան էութիւնից բղխող «ներքին օրէնքների խաղով»!!։

«Հին՝ը պէտք է խորտակի և նա խորտակուում է»։ Խորտակուում է տարերայ օրէն «բացասման բացասումի» բնաանհրաժեշտութեամբ — «կապիտալիստական արդիւնաբերութեան և իւրացման եղանակը, հետևաբար կապիտալիստական մասնաւոր սեփականութիւնը անհատական, սլփական աշխատանքի վրայ հիմնուած մասնաւոր սեփականութեան առաջին բացասումն է։ Իսկ կապիտալիստական արդիւնաբերութեան բացասումն կատարուում է հէնց իր միջոցով — բնական գործողութեան (պրոցէսի) անհրաժեշտութեամբ։ Դա «բացասման բացասումն է»։ Այս պիսով «փաստօրէն արդիւնաբերութեան միջոցների համայնական շահագործման վրայ հիմնուած կապիտալիստական մասնաւոր սեփականութիւնը փոխուում է համայնական սեփականութեան։ Առաջ սակաւաթիւ յափշտակիչներ սեփականազուրկ են արել ժո-

ղովրդական մասսաներին, հիմա էլ ժողովուրդն է սեփականացուրկ անում— էքսպրոպրիացիայի և թարկում այդ սակաւաթիւ յափշտակիչներին» («Կապիտալ», եր. 673-674)։

Նոյն լաւատես հայեացքը, նոյն բացարձակ հաւատը դէպի կապիտալիզմից ընտանհրաժեշտօրէն սոցիալիզմի անցման անխախտ դոգմը, ինչ որ իշխում էր դեռ ևս 1847 թ. «Կոմմունիստական Մանիֆեստի» մէջ.—«Խոշոր արդիւնագործութեան զարգացման հետ բուրժուազիան կորցնում է իր ոտքի տակի հողը, որի վրայ նա արդիւնաբերում և սեփականացնում է արդիւնքը։ Ուստի և ամենից առաջ նա ինքն է իր սեփական գերեզմանը փորում։ Նրա անկումն ու պրոլետարիատի յաղթանակը հաւասարապես անխուսափելի են»։

Սոցիալիզմի «զուտ պրոլետարական տեսակէտը» տրամաբանում էր.—«Կապիտալիզմի ծնունդ պրոլետարիատը

միակ յեղափոխական դասակարգն է, որ անհրաժեշտօրէն հակադրում է բուրժուազիային... — Այժմ հասարակութիւնը աւելի ու աւելի է բաժանւում երկու թշնամի բանակների, երկու իրար հետ թշնամանող դասակարգերի—բուրժուազիայի և պրոլետարիատի»։ Միայն պրոլետարն է շահագրգռուած կապիտալիզմի խորտակումով և սոցիալիզմի յաղթանակով։ Մնացած բոլոր դասակարգերը (նաև «գիւղացիները») «ոչ յեղափոխական, այլ պահպանողական են. աւելին՝ նրանք յետադիմական են. դրանք կամենում են յետ տալ պատմութեան անիւը» («Կոմմունիստ Մանիֆ.»)։ Իսկ պրոլետարիատը բուրժուազիայի հարազատ ծնունդն ու ժառանգն է. միւս դասակարգերին նա ոչնչացնում է, իսկ պրոլետարիատը միակ դասակարգն է, որ պէտք է ոչնչացնի իրեն ծնող դասակարգին—բուրժուազիային —«միայն պրոլետարիատն է, որ իսկապես ձրգ-

տում է արմատական յեղաշրջման»,— այսինքն սոցիալական յեղափոխութեան։ Եւ նրա իբրև դասակարգ զարգանալն ու յաղթանակելը և բուրժուազիայի անկումը, պրոլետարիատի դիկտատուրան (սոցիալիստական յեղափոխութեան նախապայմանը) և կապիտալիստական հասարակարգի փլուզումը «հաւասարապէս անխուսափելի» են։—«Մասնաւոր սեփականութեան դրութիւնը հէց իր սեփական, ներքին անխուսափելի դիալեկտիկայով շրջուում է իր հակադրութեան»։

Այսպէս էր հաւատացած զուտ պրոլետարական և «բացարձակ» սոցիալիզմը, ուղղափառ մարքսիզմը։ Սոցիալիստական յեղափոխութիւնն ու սոցիալիստական կարգերի տիրապետութիւնը ապահովուած էին ամեն կերպ՝ թէ բնութեան, թէ պատմութեան, թէ քաղաքատնտեսութեան և թէ...տրամաբանութեան (sic!) օրէնքներով։ Սոցիա-

լիզմի գալուստը ոչ միայն պատմական-հասարակական, այլ և բնական ու տրամաբանական (դիալեքտիկական) անհրաժեշտություն էր ըստ մարքսեան դոգմայի։

Հասկանալի է ըստինքեան, որ այս դիալեքտիկական, էապէս ոչ-յեղափոխական մտածողությունը շատ հաճելի էր նոմանաւանդ կրաւորական, յարմարապաշտ հոգիների համար։ Եւ իրօք, ինչ կար երազուն իդէալիստների համար աւելի հաճելի, ընդունելի՝ քան սոցիալիզմի այդ բնաանհրաժեշտորէն տիրապետությունը, Ազատության և Հաւասարության Թագաւորության ինքն իրեն «գալուստը»։

Եւ որքան դա, այդ ցնորապաշտ իդէալիզմը խարսխուած էր երևում իրական հողի վրայ, և հիմնաւորուած հասարակական կեանքի ըմբռնումներով (կապիտալիզմ, դասակարգային կուիւ և այլն)՝ այնքան աւելի համոզ-

կեր, այնքան աւելի տրամաբանական էր թւում այդ «տեսակէտը»։ Եւ իրօք, ինչ կար 40 60 թւականներին աւելի աչքի զարնող, աւելի ուշագրաւ, աւելի իրական՝ քան երիտասարդ կապիտալիզմի սրարշաւ, յաղթական ընթացքն ու զարգացումը իր զուգընթաց երևոյթներով, (աշխատանքի համայնացումով և պրոլետարիզացիայով)։ Նոր ամենատութեան եղանակը այնպիսի ապրագութեամբ էր զարգանում, ծաւալւում, որ նա կարող էր ամեն մի կին սխալանքի մէջ ձգել իր զարգացման օրէնքների բացայայտութեան և անխուսափելիութեան մասին։ Դա շատ հեշտութեամբ կարող էր այն իլլիւզիան, այն պատրանքը առաջ բերել, որ դրա վաղաժամ տիրապետութիւնն և eo ipso դրանով հէնց սոցիալիզմի յաղթանակը հաւասարապէս «ընդունելի ու անխուսափելի» են։

Եւ Մարքս ու Էնգէլս բնականօրէն

ընկան այդ սխալանքի, այդ պատրանքների մէջ, ինչպէս յետոյ խոստովանեցին իրենք։ Կապիտալիզմի արտակարգ արագութեամբ ծաւալուելը չափազանց խաբուսիկ էր այդ տեսակէտից։ Ի տես այդ ակնթարթ, այդ չափազանց որոշ երևոյթների նրանք տրամաբանում էին՝ կապիտալիզացիա — պրոլետարիզացիա — սոցիալիզմ։ Կապիտալիստական տնտեսութիւնը իր ներքին անհաշտելի հակասութիւններով՝ — հասարակական արդիւնագործութիւն և մասնաւոր սեփականութիւն, ծայրայեղ հարստութիւն (դերարտադրութիւն) և ծայրայեղ թշուառութիւն, դերկուլտուրա և դերբարբարոսութիւն («քաղաքակրթութեան մէջ բարբարոսութիւն») — տանում է ինքն իրեն դէպի խորտակումն։

Դրա խորտակումը պայմանաւորուած է դրա ծայրայեղ զարգացումով։ Նա ինքն արդէն կռում է ոչ միայն

իր դեմ ուղղելիք մահացու զէնքերը, այլ և դրանց զինակիրներին, իր «գերեզմանափորներին» — պրոլետարիատներին։ Ներքին հակամարտ ուժերը կապիտալիզմի զարգացման ծայր աստիճանին առաջ կը բերեն մի մեծ տակնուվրայում — «սոցիալական» յեղափոխութիւնը և կհաստատեն սոցիալիզմի տիրապետութիւնը։

Եւ սոցիալ-տնտեսական երևոյթների այս միակողմանի ըմբռնողութիւնն ու գերագնահատումը՝ զուգորդելով մի անհարազատ ու արտաքոց մտածելակերպի — «դիալեկտիկայի» հետ՝ առաջ բերին մարքսիստական իլիւզիոնիզմը (ցնորականութիւնը) և սոցիալական ֆատալիզմը (ճակատագրականութիւնը)։ Մի տարականոն մտածողութեամբ, մի միամիտ ու պարզամիտ տրամաբանութեամբ յանուն «բացարձակ» գիտականութեան նոյնացուցին բնական տրամաբանական և պատմական (սո-

ցիալ-տնտեսական) զարգացումները։ Ըստ այդ մտայնության՝ օր՝. սոցիալական զարգացումն ու սոցիալական յեղափոխությունը ոչ միայն սոցիալական-պատմական, այլ և բնական (!) (բնագիտական) ու «տրամաբանական» (!!) գործողություն են։ —Սոցիալական օրէնքը տրամաբանական (դիալեքտիկական) ու բնական օրէնք է միաժամանակ։ Սոցիալ-պատմական անհրաժեշտությունը ինքնին արդէն բնական ու տրամաբանական անհրաժեշտություն է։

«Սոցիալիզմի իրականացումը մի բնագիտական (!) լինելություն» է էստ Բեբելի։ Դա պէտք է կատարվի ինքն իրեն, այսպէս՝ թէ այնպէս — «so wie so»։

Եւ այս ճակատագրապաշտ ու ցնորապաշտ մտայնությունը տիրապետող է առհասարակ մարքսիստական աշխարհում։ Ցնորապաշտությունը, սո-

ցիալական մօտալուտ յեղափոխութեան միամիտ հաւատը բղխում էր մարքսիստական աշխարհայեացքի էութիւնից—դիալեքտիկական մտածելակերպից («մեթոդից»!), տնտեսական—պատմական մատերիալիզմից—արդիւնաբերական-տնտեսական ուժերի սոցիալ-յեղափոխական նշանակութեան գերգնահատումից, կապիտալիզացիայի և պրոլետարիզացիայի երևոյթների չափազանցումից և այլն և այլն։ Իրողութիւնն այն է, որ ըստ մարքսիզմի սոցիալական յեղափոխութիւնը պէտք է լինի 1) շուտով (?) —47-րդ թուականից սկսած «այսօր չէ վաղը», յամենայն դէպս 19-րդ դարի վերջից ոչ ուշ՝ և 2) ինքն իրեն։

Որքան էլ յետագայում սոցիալիստական յեղափոխութեան դիալեքտիկական ու ֆատալիստական ըմբռնումը կեանքի հրամայականների և անողոք փաստերի ազդեցութեան տակ որոշ

անհատների կողմից որոշ փոփոխութիւններ է կրել, բայց մարքսիստական գլխաւոր դոգմերի հետ՝ դա էլ էապէս անիսխտ է մնացել մարքսիստական դրականութեան մէջ։ Օրինակ՝ ուղղափառ մարքսիստ Կ. Կաուտսկին՝ քննելով սոցիալական բարեփոխութեան և սոցիալական յեղաշրջման յարաբերութիւնը՝ գրում է։

—«Մենք երբէք էլ չենք կամենում պնդել, որ սոցիալական յեղաշրջումը ինքն իրեն պէտք է կատարուի, որ անընկճելի տարերային գործողութիւնը (պրոցէսը) այդ կանի առանց մարդաւ միջամտութեան և որ իբր թէ արդիւնաբերութեան կապիտալիստական եղանակի հակասութիւններից տանջուող բանւորներին ոչինչ չէ մնում անել, բայց եթէ հանգիստ ծալել ձեռքերը կրծքին և սպասել, մինչև որ այդ հակասութիւնը ինքն իրեն կանհետանայ։

«Երբ ասում են՝ թէ հասարակական

զարգացումն անխուսափելի և բնական անհրաժեշտութիւն է՝ հասկանալի է, որ նկատի են ունենում և այն հանգամանքը, որ մարդիկ—մարդիկ են և ոչ թէ մեռած տիկնիկներ, որ նրանք որոշ կարիքներ ու կրքեր ունին, որոշ ֆիզիքական և հոգեկան ուժեր, որոնց միջոցով նրանք աշխատում են լաւացնել իրենց դրութիւնը։ Կրաւորականորէն ենթարկուել ակնայայտ կերպով անխուսափելի գործողութեանը չի նշանակում այդ իր բնական ը՝ թացքին թողնել, այլ թողնել, որ դա կանգ առնի և յետ մնայ։

«Եթէ մենք մասնաւոր սեփականութեան ոչնչացումն անխուսափելի ենք համարում, այդ դեռ ևս չի նշանակում, որ մենք ենթադրում ենք՝ իբրև թէ մի դեղեցիկ օր սոցիալական յեղաշրջման տապակած աղա նիները շահագործողների բերանը կընկնեն՝ առանց որևէ կողմից դրա համար որևէ աշխատանք

թափելու։ Մենք հէնց նրա համար ենք տիրող հասարակութեան անկումը անխուսափելի համարում, որ դիտենք, թէ ի՞նչպէս տնտեսական զարգացումը բնական անհրաժեշտութեամբ զարգացնում է այն պայմանները, որ հարկադրում են շահագործողներին կուել մանաւոր սեփականութեան դէմ։ Գիտենք, որ դա բաղմապատկում է շահագործողների թիւը և ուժը որոնք շահագրգռուած են տիրող կարգի պահպանմամբ.— Գիտենք նաև, որ դա տանում է դէպի մասսայի համար անտանելի կացութիւն, որից միայն երկու ելք կայ, կրաւորական մահ կամ ներգործօն յեղաշրջումն տիրող կարգի («Ֆուրաի ծրագիրը» 80—81 եր։ համեմատել—Ֆ. Էնգելս.—«Գիտութեան յեղաշրջումը...» 7 րդ հրատ., գերմ. եր 300 303)։

Ապա Կաուտակին ասում է, որ կարիք չկայ նաև, որ այդ յեղաշրջումը տեղ

ունենայ զարիւնահեղութեամբ և բրուտութեամբ. համաշխարհային պատմութեան մէջ եղել են արդէն դէպքեր(!) երբ տիրող դասակարգերը մի առանձին խորաթափանցութիւն կամ վախկոտութիւն են երևան հանել և անձնատուր եղել կամովին, հասկանալով, որ իրենք անխուսափելիօրէն պէտք է ընկնին։ Անհրաժեշտ չէ նոյնպէս, որ այդ յեղաշրջումը կատարուի մեկ հարուածով... Բայց ոչքան էլ բազմազան լինի յեղաշրջման ձեւերը, երբէք էլ դա չի կատարուիլ առանց տիրող հասարակութեան ամենաճնշած խաւերի գործօն մասնակցութեան»։

Այսպէս է արդէն մեկնաբանում մարքսիստը հեգել մարքսեան դիալեկտիկայով «իր հակադրութեան յեղաշրջելու զարգացողութիւնը, աւելացնելով «Մասնաւոր սեփականութեան խորտակումը միայն ժամանակի հարց է։ Այդ բնաստակումը անխուսափելիօրէն պէտք է

կատարելի թէն ոչ ոք որոշակի, չգիտէ թէ երբ և ինչպէս*) պէտք է այդ կատարուի»։ (Նոյն տեղ. եր 83)։ Այս արդէն մեծ վիրապահումն է. թէն «անխուսափելիութեան» դոգմը մնացել է. բայց ժամանակի և եղանակ մասին քննադատական վիրաբերմունք կայ։ Սակայն թէ այդ վիրապահումները և թէ մարդկանց գործօն մասնակցութեան և յեղափոխական դերի շեշտումը հերքում են հէնց նոյն Կաուտսկու նոյն գրքի խօսքերով, որտեղ նորից մարքսեան դոգմատիզմն ու նեղմիտ դիալեքտիքական մտածողութիւնը մատնում են իրենց.»—Եթէ պրոլետարիատը գիտակցօրէն չկամենայ օգտուել պետութեան մէջ իր իշխանութիւնից տիրելու արդիւնագործութեան միջոցներին և արդիւնագործութեան կապիտալիստական եղանակը սոցիալիստականի փոխելու՝

*) Բոլոր ընդգծումներն իմս են, Վ. Ի.

այն դէպքում փաստերի տրամաբանութիւնը իմբը կրկնատրի այդ, ինարկէ ոչ առանց որոշ սխալանքների, մոլորումների, աւելորդ զոհերի, ժամանակի և ուժերի կորստեան։ Բայց ա դիւնագործութեան սոցիալիստական եղանակը պէտք է գայ և կրգայ։ Նրէ (?) անխուսափելի է պրոլետարիատի տիրապետութիւնը՝ նոյնքան անխուսափելի է նաև սոցիալիզմի տիրապետութիւնը»։ (նոյն տեղ, եր. 167)։

Մօտ հայ իր երես առաջ որքան զգուշաւոր, որքան վերապահ էր խօսում, որքան բարդ էր երևակայում կառուցակին սոցիալական շարժումն ու յեղափոխութիւնը. այնտեղ շատ բան կտրուած էր մարդու գործօն, յեղափոխական մասնակցութիւնից։ Այնտեղ ասւում էր, «եթէ» պրոլետարիատը չէ կամենում «կրա՝ որական մահով» մեռնել պէտք է յեղափոխութիւն անի։ Իսկ այստեղ ասւում է. եթէ պրոլետարիատը իր

չանն ու դերը չգիտակցէ և սոցիալա-
կան յեղափոխութիւն առաջ բերի՝ «փաստերի տրամաբանութիւնը(!) ինքը կը
կատարի այդ»։ Նոյն դիալէքտիկական
հակատագրապաշտութիւնը և գործօն
յեղափոխական ու կրաւորական դիա-
լիքտիքա ան խառն ու շփոթ ըմբռ-
նողութիւնը սոցիալական շարժման մա-
սին։—Մի կողմից արդիւնագործութեան
սոցիալիստական եղանակը պէտք է գայ
և կգա՝» մրւս կողմից—«եթէ պրոլե-
տարիատը չի կամենում «կրաւորական
մահով մեռնել»...

Այս հակասութիւնից ոչ մի ելք չկայ
դիալէքտիկական և մատերիալիստական
ըմբռնողութեան համար, որովհետև հա-
կասութիւնը հենց իր մէջ է։

Կաուտսկին էլ չի կարողացել դուրս
գալ մարքսիստական պատմա-դիալէք-
տիքական մտածելակերպի ինքնահա-
կաս ութիւնից և ցոյց տալ որոշակի
թէ ինչպէս պէտք է կատարի սոցիա-

լական մեծ յեղաշրջումը. դա նրա կար-
ծիքով կախված է և՛ տնտեսական զար-
գացման բնականհրաժեշտ ընթացքից—
փաստերի տրամաբանութիւնից և՛
պրոլետարիատի յեղափոխական աշխա-
տանքից. մէկ թւում է՝ թէ տուանց
պրոլետարիատի յեղափոխական գործի
և աշխատանքի ոչինչ չի լինի, մէկ էլ
մեզ ասում են, որ ինքն իրեն, դրա-
լեքտիկօրէն կատարող սոցիալական
յեղաշրջումը սահպում է իր դերից
խուսափող ու կրաւորական պրոլե-
տարիատին «յեղափոխութիւն անել»
կամ վերջին գործողութեան արդէն
պատրաստի դերը «խաղալ».—Նա ին-
քը (տնտեսական տրամաբանական զար-
գացումը) մղում է պրոլետարիատին դէ-
ի սոցիալիզմ և ապարդիւն է դարձնում
յաղթանակը(!) պրոլետարիատամ-
մեն մի փորձը թեթեւ դեպի այլ կողմ։
Պրոլետարիատը վերջ ի վերջոյ ստիպված
կլինի մտնել այն ուղին, որից նա խու-

սափում էր»։ (Նոյն տեղ, 167 եր.)։

Հիմա արիք և հասկացէք՝ թէ ըստ ուղղափառ մարքսիզիմի ոլ երբ և ինչպէս պէտք է կատարի սոցիալիստական յեղափոխութիւնը։

Մարքսի այս չփոթն ու անվերջ հակասութիւնները առաջանում են սոցիալական շարժման դիալեքտիկական անգիտական և մատերիալիստական միակողմանի ըմբռնողութիւնից. Դիալեքտիկ մեթոդը չի էլ կարող որոշակի պատասխանել՝ թէ ինչպէս պէտք է կատարի սոցիալական յեղափոխութիւնը, որովհետև ճշտ չէ նրա տեսակէտը սոցիալական շարժման մասին առհասարակ։ Այդ շարժման մասին մարքսիզմի «դիալեքտիկական» ըմբռնողութիւնը չի հաշուում, առանց հակասութեան չի միանում դրա սոցիալ-յեղափոխական ըմբռնողութեան հետ։ Եւ հաշտութիւն լինել էլ չի կարող։ Հակասութիւնը միշտ իրեն զգա-

ցնել կտայ։ Մենք տեսանք՝ թէ կատ-
տրսկին որպիսի հակասութիւնների մէջ
բնակաւ՝ կամենալով սոցիալական շարժ-
ման «դիալեքտիկական» ըմբռնողու-
թիւնը միացնել դրա «յեղափոխական»
ըմբռնողութեան հետ։

Հակասութիւնից միակ ելքն է—հրա-
ժարուել անգիտական և անհիմն հե-
գելեան «դիալեքտիկայից», միակողմանի
մատերիալիստական տեսակէտից և «կա-
պիտալիստական» զարդացման սխալ
թէորիաներից—(որպէս թշուառացման
թէորիա, ճգնաժամային թէորիա, բա-
ցարձակ կոպիտալիզացիա, մանր տնա-
տեսութեան ոչնչացումն և այլն և այլն)։
Հրաժարուելով այդ ամենից՝ պէտք է
ընդունել, որ սոցիալական շարժումը
երբէք էլ դիալեքտիկական կամ «բնա-
գիտական» շարժումն է, այլ գերազան-
ցօրէն պատմական շարժում իր ուրոյն
«օրէնքներով», որոնք աւելի քիրուկա-
նական կանոնի՝ քան թէ մաթեմատիկ-

քական-տրամաբանական օրէնքի նը-
շանակութիւն ունին։ Դակտարում է
նիւթական (սոցիալ տնտեսական) և գա-
զափարային (արդէնային կամային) ու-
ժերի փոխադարձ գործակցութեամբ։
Այս երկու ուժերի փոխազդեցութեան
արդիւնք է սոցիալական շարժումը (հե-
տեւաբար և սոցիալական յեղափոխու-
թիւնը)։ Դրանց փոխ զդեցութեամբ է
աստիճանաբար զարգանում, փոխւում
ու «յեղափոխում» հասարակական-պատ-
մական կեանքը։

Այս ըմբռնողութեան մէջ իմ են
ձուլում էվոլիւցիայի և ռէվոլիւցիայի
— աստիճանական զարգացման և յե-
զափոխութեան տեսակէտները։ «Յեղա-
փոխութիւնը» աստիճանական զարգաց-
ման այն գրծողութիւնն է կ չ ում, որ
գլխաւորապէս մարդկանց գիտակցա-
կան և գործօն կամ ցողութեամբ կա-
տարում։ Այդպէս են կոչում այն
պատմական մոմենտները, երբ մարդ-

կանց գործօն մասնակցութիւնը առանձնապէս շեշտուում է։ Բոլոր որովհետև առհասարակ մարդիկ սոցիալական շարժման անբաժանելի բաղադրիչ տարրն են կազմում, ուստի և դա սկզբից ևթ «յեղափոխական» բնոյթ է կրում։ «Յեղափոխական» (ռէվոլիւցիոն) է սոցիալական շարժումը (էվոլիւցիան)՝ թէ նիւթական-տնտեսական և թէ մարդկային-գաղափարական ուժերի ներգործութեամբ։ Այդ երկու շարժիչ ուժերի գործօնների reալ (իրական) միութեամբ է կատարուում ամեն մի սոցիալական շարժում։

Պատմութեան կամ սոցիալական կեանքի այս reալիստական-յեղափոխական մբռնողութիւնը մենք հակադրում ենք դրա միակողմանի, մասամբ էլ ոչ դիտաան «մատերիալիստական-դիալեքտիկական մբռնողութեանը» եւ «ռէալիստական-յեղափոխական» տեսակէտից առանց հակասութիւնների կա-

ելի է բացատրել սոցիալական շարժումն առհասարակ և դրա ամենամեծ գործունեությունը—«սոցիալական յեղափոխությունը»։

Թալիստական տեսակետից «սոցիալիստական յեղափոխությունը» ոչ թե մի տրամաբանական անհրաժեշտությամբ կատարվող պրոցեսի վերջին գործունեությունն է, որ պետք է տեղի ունենայ մի անգամից, անսպասելի կերպով, «սնակնկալ յեղաշրջումով», տիրող դրությանն «իր հակադրությանն շրջումով», այսօր՝ կամ վաղը, այլ մի բարդ, աստիճանական, բարդ լայն մրցքով՝ բարեհորոգչական զարգացում, որ տեղի է ունենալու որոշ յեղափոխական իրադարձություններով—մեծ փոփոխություններով։

Սոցիալական շարժման ռէալիստական-յեղափոխական տեսակետի հակառակ՝ յատկանշական ու բնորոշեն «Մեծ յեղաշրջում» կամ «իր հակա-

դրութեան շրջումն» դարձուածքները, որ մարքսիզմը սիրով գործ է ածում «սոցիալիստական յեղափոխութեան» համար։ Դրանք պատահական դարձուածքներ չեն։ Դրանք բղխում են դիալեքտիկական մտածողութիւնից— սոցիալական շարժման «իբր թէ» եռաստիճան օրէնքից՝—թէզ, անտիթէզ, սինթէզից։ «Մեծ յեղաշրջում» արտայայտութիւնը մի այլ անունն է «բացասման բացասումն» արտայայտութեան։ Սոցիալական յեղափոխութեան յանկարծակի և կատաստրոֆային ըմբռնողութիւնը մարքսիզմի մէջ հարազատ ժառանգութիւնն է Հեգելեան դիալեքտիկայի։ Հակադրութիւններով—հակասումներով ու բացասումներով—կատարուող զարգացման մտապատկերը սնուցանում էր հասարակութեան կապիտալիստական ձևից սոցիալիստականի անցման՝ «յեղաշրջման» նախ «մեծ»—հիմնո-

վին ու հակապատկեր լինելը—(ամեն դրութիւն ըստ Հեգել Մարքսի «շրջում է իր ներքին, անխուսափելի դիալեքտիկայով իր հակադրութեան»).— ապա անակնկալ («ոչ ոք չգիտէ՝ թէ այդ երբ կլինի», Կ. Կաուտսկի), և երրորդ՝ մօտալուտ լինելը։

Սոցիալիստական թագաւորութեան մօտալուտ «գալստեան» ցնորքը հետևանք էր այն տեսակէտի, որ դա պէտք է անակնկալ լինի։ Եւ ամեն անգամ, երբ որոշ նշաններ ցոյց էին տալիս կապիտալիզմի—«դրութեան»—ծայրայեղ զարգացումը՝ մարքսիստն՝ը սրտատրոփ սպասում էին «հակադրութեան»—սոցիալիզմի տ՝րապետութեան։ Եւ ինչպէս տեսանք, այդ նրանց շատ և շատ մօտ էր երևում։ Առաջին մարքսիստները նըմանւում էին մասամբ առաջին քրիստոնեաներին այս տեսակէտից։ Նրանք էլ էին սրտատրոփ ու անհամբեր

պատասում «Երկրորդ գալստեան»—երջանկութեան՝ ազատութեան ու եղբայրութեան թագաւորութեան:

Եւ թէպէտ Կաուտսկին արդէն այն կարծիքին է, որ «անհրաժեշտ չէ որ այդ յեղաշրջումը մէկ հարուածով կատարուի», *) բայց ըստ Մարքսի և Էնգելսի դա համարեա թէ „մէկ հարուածով“, միանգամից է կատարուում: Տեսանք՝ թէ ինչպէս Մարքսը մարգարէական ուղղափառութեամբ ու հաւատով աղդարարում էր.—տիրող հասարակական ձևը «իր ներքին, անխուսափելի դիալեքտիկայով շրջուում է իր հակադրութեան». կապիտալիստական հասարակութեան բովանդակութիւնը հասել է զարգաց-

*) Այս միտքը նա աւելի զարգացրեց 18 տարի յետոյ՝ 1902 թ. իր «Սոց.բարեփոխութիւն» և «Սոց. բարեփոխութեան հետևեալ օրը» գրքոյկում.

ման այն աստիճանին, երբ նրա կապիտալիստական կեղևը պէտք է պատուի, խորտակուի։ «Եւ դա խորտակւում է։ Արդէն խփում է կապիտալիստական մասնաւոր սեփականութեան ժամը։ Սեփականազրկողներին սեփականազուրկ են անում («Կապիտալ»)։

Նոյն սահազանգն է հնչեցնում և Էնգելս.—զարգացման «այդ աստիճանը արդէն հասել էր։ «Մարդն առաջին անգամ ազատ, գիտակից, ու ինքնիշխան կերպով իր ձեռքն է առնում իր ճակատագրի տնօրինութիւնը։ Առաջին անգամ մարդկայի պատմութեան մէջ նա ազատւում է բնութեան և պատմութեան խորթ ուժերի գերիշխանութիւնից և ենթարկում դրանց իրեն։—«Դա մարդկութեան ոսիւնն է անհրաժեշտութեան (ստրկութեան) թագաւորութիւնից դէպի ազատութեան թագաւորութիւնը»*)։

*) «Անտիդիւրինգ» կամ «Գիտու-

Ահա այսպէս էր ըմբռնում մարքսիզմը սոցիալիստական յեղափոխութիւնը. դա պէտք է կատարուէր նախ՝ ինքնաբերաբար և ապա շուտով ու յանկարծակի։ Այս ըմբռնումը բղխում էր մարքսիզմի հիմնական սոցիալ-տնտեսական տեսակէտից — «կապիտալի կենտրոնացման» և յարակից գաղափարներից — շուկաների և ճգնաժամերի թէօրիաներից, մանր տնտեսութեան, և մանր ազգերի ոչնչացման, իշխանութեան կենտրոնացման, պրոլետարացման և այլն տեսակէտներից. իսկ սրբանք բոլորն էլ բղխում էին մէկ և գլխաւոր տեսակէտից՝ կապիտալիզացիայի բացարձակ ուսմունքից. կապիտալի կենտրոնացման idée fixe-ով — սևեռեալ, միտք կաշկանդող գաղափարով են պայմանաւորուած միւս տեսա-

---

թեան յեղաշրջումը Գ. Է. Դիւրինգի միջոցով». գերմ. 7-րդ հրատ. եր. 304-306։

կէտները. եթէ կապիտալի կենտրոնացումը կամ կապիտալիզացիան բացարձակ անհրաժեշտութիւն և օրէնք է, ապա անխուսափելիէ և մանր տնտեսութեան ոչնչացումն ու (նաև մանր գիւղացիութեան) պրոլետարիզացիան։ Բացի այդ՝ կապիտալիզմի անարգել ու արագ զարգացման համար անհրաժեշտ նախապայման է նաև իշխանութեան կենտրոնացումը. այստեղից և մարքսիզմի բացասական վերաբերմունքը մի կողմից դէպի գիւղացիութիւնն ու հողային հարցը, միւս կողմից էլդէպի մանր ազգերի ինքնավարութեան իրաւունքներ ու ազատագրական շարժումները։ Այդ հիմնական տեսակէտով, մատերիալիստական դիալեքտիկայով է բացատրւում նաև մարքսիզմի բացասական վերաբերմունքը դէպի գործօն անհատների ու մարտական փոքրամասնութեան յեղափոխական դերը պատմութեան կամ սոցիալական շարժման մէջ։

Առհասարակ բացարձակ կապիտալիզացիայի թէորիան այն «սև գիշերն» է, ինչպէս Հեգելն է ասում իր «Աբսոլուտի», «Բացարձակի» մասին, «որի մէջ բոլոր կատուն՝ը սև են երևում»։ Կապիտալիզացիայի և բացարձակ սոցիալիզմի տեսակէտից—ինչպէս այդ պատկերացնում է «Կոմմունիստ. Մանիֆեստի» մէջ—բոլոր սոցիալական երևոյթները՝ ազգային հարց, հողային հարց, կառավարութեան ձև և այլն «սև» էին երևում. դրանք կանխակալ տեսակէտն՝ը՝ նախապաշարուած դոգմատիկներին երևում էին այնպէս, որպէս որ դրանք նպաստաւոր էին կապիտալիզացիայի ու պրոլետարիզացիայի տեսակէտից։ Ամեն ինչ լուսաւորում, դունաւորում և գնահատում ու մեկնաբանում էր միայն այդ տեսակէտից։

Ամեն տեղ և ամեն բանի մէջ, 40-ական թուականներին մանաւանդ,

Մարքս և Էնգելս կապիտալիզմի, որ ասել է պրոլետարիատի ու սոցիալիզմի յաղթանակ էին տեսնում կամ ուզում էին տեսնել։ Ուստի և ինչ որ նրանց կարծիքով հակառակում ու ներհակում էր իրենց մտքի գերիշխող գաղափարին՝ հալածւում և մերժւում էր նրանց կողմից։—«Ցեղափոխութեան յաջողութիւնը գերագոյն օրենքն է»—հոլովում էին նրանք ամեն րոպէ, ամեն առթիւ։ Ամեն ինչ «Ցեղափոխութեան», որ նշանակում էր մօտալուտ «սոցիալ(իստ)ական» յեղափոխութեան համար։ Գիւղացիութեան հարց, մանր ազգերի ինքնորոշման, իշխանութեան ապակենտրոնացման և այլն հարցերը պէտք է զոհաբերել ամենամեծ ֆետեշին ու արժէքին—«սոցիալական յեղափոխութեան»։

Այս էր ահա 40-ական և 50-ական թւականների գլխաւոր մտայնութիւնը «մարքսիզմի» մէջ։ Հենց որ մի մեծ

պատերազմ կամ քիչ թէ շատ յեղափոխութիւն՝ կամ էլ տնտեսական ճգնաժամ էր լինում—Ֆրանսիայում, Անգլիայում, անգամ Ռուսաստանում—Նրանք իսկոյն սոցիալական յեղափոխութեան ազդանշանն էին տեսնում դրանց մէջ։ Նրանք սխալւում էին բնականաբար, որովհետև կանխակալ տեսակէտներն ու սպասումը ինքնին իլլիւզիաների ծնողներն են։ Եւ այս «սխալանքներն ու իլլիւզիաները» սոցիալական յեղափոխութեան նկատմամբ՝ մարքսիզմի հիմնադիրները անկեղծօրէն և պարզօրէն խոստովանեցին յետագայում—կէս դար անց, երբ կապիտալիզացիայի, պրոլետարիզացիայի սոցիալիզմի կոնցեպցիան չապացուցեց իր բացարձակ օրէնք լինելը։ Էնգելսը 1895 թ. յիշելով, որ 1848 թ. ֆրանսիական յեղափոխութիւնը իրենք «գունաւորում» էին նախորդ յեղափոխութիւնների «վառ մտապատկերնե-

րով և «սոցիալական կամ պրոլետարական յեղափոխութիւն» համարում այդ, նկատի ունենալով դրա յաջողութիւնները, այսպէս է բացատրում իրենց սխալները.—«Ահա այս հանգամանքներում մեզ համար և ոչ մի կասկած չէր կարող լինել, որ հասել է մեծ, վրճռական պայքարի ժամը, որ այս պայքարը լիակատար, երկար և իրադարձութիւններով լի մի յեղափոխական շրջան է սկսելու, բայց որ դա պէտք է միայն պրոլետարիատի վճռական յաղթանակով վերջանայ»*).

Շատ նշանակալից են այդ նախադասութիւնները և շատ հասկանալի նաև առանց բացատրութիւնների. և դրանք աւելի նշանակալից են դառնում Էնգելսի հետևեալ պատմական յայտարարութեամբ.—

*) К. Марксъ: «Классовая борьба въ 1840—50 г. во Франціи» դրքի նախաբանում՝ էր. 6, 9, 10։

«Բայց պատմութիւնը խաբեց մեզ*) և երևաց, որ այն ժամանակ մեր տեսակէտը ցնորք—(իլլ'ուզիա) էր միայն։ Պատմութիւնը աւելի հեռուն գնաց։ Նա ոչ միայն մերկացրեց մեր այն ժամանակուայ սխալը, այլև հիմնովին կերպարանափոխեց այն պայմանները, որոնց մէջ պէտք է կռուի այսու հետև պրոլետարիատը։ Պայքարի այն ձևերը (բարրիկադային յեղափոխութիւն և այլն), որ գործադրում էին 1848 թ. այժմ հնացել են ամեն կողմից...

Պատմութիւնը չարդարացրեց մեր ըմբռնումները և բոլոր նրանց տեսակէտները, ովքեր բաժանում էին մեր

*) Քաղում եմ ռուսերէն թարգմանութիւնից. որքան յիշում եմ, գերմաներէնում այսպէս է. «պատմութիւնը մեզ հետ անիրաւ վարուեց», որ աւելի բնորոշ արտայայտութիւն է։

տեսակէտները։ Դա ցոյց տուեց, որ մայր ցամաքի (Եւրոպայի) տնտեսական զարգացումը դեռ բաւարար չափով չէ հասունացել կապիտալիստական արդիւնաւորութիւնը վերացնելու համար»*)։

Եւ այսպէս.կէս դար անց (95թ.) արդէն սոցիալիստական յեղափոխութեան նկատմամբ մեծ ուտոպիստները յայտարարում են, որ իրենք հիմնովին սխալուել են, թէև այդ «սխալանքն» ու «ցնորքը» հոգեբանական հիմունքներով են պատճառաբանում և արդարանում՝ փոխանակ դրանց բուն աշխարհայեացքից բղխող պատճառները քննելու։ Այսպէս կամ այնպէս՝ կէս դար յետոյ, Ինտերնացիոնալն ու մի սոցիալիստական գիտակից, քանակով ու որակով հզօր բանակ ունենալուց յետոյ էլ Էնգելս գրում է.— «Եթէ սակայն պրոլետարիատի

*) Նոյն տեղ. եր. 9.

այդ մեծ բանակն էլ դեռ ևս իր նպատակին չէ հասել, եթէ դա դեռ չէ կարող մի վճռական հարուածով ձեռք բերել իր ուզածը, այլ պէտք է ծանր պայքարով խլի բռնամուց դիրքերը մեկ առ մեկ՝—դրանից անշեղօրէն հետևում է, որ 1848 թ. սոցիալական հիմնական յեղաշրջումն կատարել չէր կարելի լոկ իշխանութիւնը խլելով» (նոյն տեղ)։

Այսպէս հետզհետէ ինքնագիտակցութեան է գալիս երիտասարդ մարքսիզմը և վերաքննութեան ենթարկում իր հիմնական տեսակէտները։ Հասարակական կեանքի զարգացման և գիտական-քննական մտքի ազդեցութեան տակ նա յետագայում շատ բան է փոխում ու վերաքննում. նախ «Կոմմունիստ. Մանիֆեստի» իր մաքսիմալիստական ծրագիրը բաժանում է երկու՝ մինիմալ և մաքսիմալ մասերի. երկրորդ

իր ծրագրի մէջ է ընդունում հողային ու ազգային հարցերը և երրորդ՝ հրաժարւում է առհասարակ «կատաստրոֆային» և թէորիայից («ճգնաժամերի», «շուկաների», «թշւառացման») և այլ թէորիաներից *) պարլամենտական-ռեֆորմիստական գործնէութիւն ընդունում։ Բայց այս նոր ճանապարհին մարքսիզմը իր երկրորդ մեծ մեղքի մէջ է ընկնում, որ նոյնպէս դիալեքտիքական մտածելակերպից էր բղխում. այս շրջանում 40-ական թւերի ծայր յեղափոխական մարքսիզմը փոխւում է մի ծանծաղ ռէֆորմիզմի ու կրաւորական օպորտիւնիզմի (յարմարապաշտ ու անգործօն քաղաքականութեան)։ Այս զառամող ու ոչ-յեղափոխական մարքսիզմի դասական օրինակը գերմանական սոցիալ-դեմոկրատիան է։ Սա

*) К. Каутскій: Соц. реформа... 1905 г. Р осговъ на Дону, стр. 33...

էլ արդէն մի՛շտ անպատրաստ է սոցիալական յեղափոխութեան և առհասարակ յեղափոխութեան համար։ Դա իրեն նպատակ է դրել մասսաների «կազմակերպութի՛նը»... պէտք է դասակարգային գիտակցութեան բերել, խտացնել սոցիալիստական բանակի շարքերը և կազմակերպել, կազմակերպել ու... անվերջ կազմակերպել — մինչև որ կհնչի կապիտալիստական հասարակութեան բնական մահուան ժամը. և կհնչի ինքն իրեն, դիալեքտիքական զարգացման «ներքին օրէնքների խաղով»... Սա էլ մարքսիզմ է։ Եւ սա, այս՝ գիտութեամբ քօղարկուած՝ *) յարմարա-

*) Դիալեքտիքական մտածելակերպը «յեղափոխական» է միայն առերևոյթ. փաստօրէն դա ոչ-յեղափոխական է գործնականում։ Հեգելի համար էլ տիեզերական ու յաւերժական դիալեքտիկան իրականում

պաշտ ու կրաւորական մեսսիականութիւնն է իսկական մարքսիզմը և ոչ 40-ական թե՛ բի կամ բոմանո-սլաւոնական բլանկիստական ու մաքսիմալիստական «մարքսիզմը»։

Այդ բոլոր ներքին հակասութիւնների ու անհետևողականութիւնների բուն պատճառը չարաբաստիկ մետաֆիզիքական «դիալեքտիկան» է իր յարակից քաղաքատնտեսական ոչ-գիտական թէօրիաներով (օր՝. կապիտալիզացիայի ու պրոլետարիզացիայի, ճգնաժամերի, թշուառացման և այլն թէ օրիաներ)։ Ուստի և մարքսիզմը՝ կամ դիալեfտիական սոցիալիզմը որոշ հետևողական ու ամբողջական տեսակէտ չունի սոցիալ-(իստ)ական յեղափոխութեան մասին։ Դա չի կարող ասել՝ թէ այդ ե՛րբ և

վերջանում էր պրուսական բռնապետութեամբ՝ իբրև իդէալական «սինթէզով»։

ինչպես պէտք է լինի։ Դրա տեսակէտը սոցիալիստական շարժման այդ մեծ դրւագի մասին կամ կատաստրոֆային-տարերային է կամ ֆատալիստական կրաւորական։

Այդ հարցն որոշ ու մեկին պատասխանում է միայն յեղափոխական և rեալիստական սոցիալիզմը իր ամբողջական (ինտեգրալ) պատմափիլիսոփայական կոնցեպցիայով։ Ճըշտիւ ըմբռնելով ու գնահատելով հասարակական կեանքի բոլոր գործօն ուժերը և դրա զարգացման էուԹիւնը՝ ըէալիստական սոցիալիզմը միայն կարող է որոշ պատասխան տալ այդ հարցին՝ ԹէԵրբ և ինչպէս պէտք է լինի սոցիալ(իստ)ական յեղափոխուԹիւնը։

—

ՍՈՑԻԱ(ԼԻՍ)ՏԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՐԷԱԼԻՍՏԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՂՈՒԹԻՒՆԸ

Ռէալիստական և յեղափոխական տեսակէտից, որ առանձնապէս շեշտում է հոգեկան-բարոյական ուժերի և մարդական ու դաղափարական անհատների յեղափոխիչ դերը մարդկային պատմութեան մէջ, շատ հասկանալի և պարզ է՝ թէ ինչպէս պէտք է լինի սոցիալ(իստ)ական մեծ յեղաշրջումը։ Դա պէտք է կատարուի այնպէս՝ ինչպէս որ կատարւում է պատմական շարժումը առհասարակ տընտեսական և մարդկային կամ նիւթական և դաղափարային ոյժերի փոխազդեցութեամբ։ «Արդիւնագործական ուժերի» յեղափոխիչ դերի հետ իրենց դործը պէտք է տեսնեն նաև այդ բոլորի ստեղծիչ մարդիկ իրենց գերազանցօրէն ինտելիդենտ-և գիտա-

կից մտքով, յեղափոխական ու բարոյական կամքով և ներգործող միջամտութեամբ։

Եթէ ճիշտ է ընդհանրապէս, որ »մարդիկ իրենք են ստեղծում իրենց պատմութիւնը», մարդիկ, այսինքն այս կամ այն շահագրգիռ դասակարգն է ստեղծում իր համար այս կամ այն հասարակական վիճակը, ապա այդ կրկնակի ճիշտ է սոցիալ(իստ)ական յեղափոխութեան համար։ Սոցիալիզմի թագաւորութիւնը իբրև ամենամեծ ու արմատական սոցիալ-կուլտուրական յեղաշրջումը աւելի դիտակցութեան, աւելի մեծ պատրաստութիւն և սիստեմատիկ ու ստեղծագործ աշխատանք է պահանջելու։ Առաջին անգամ պատմութեան մէջ մարդկային հոծ բազմութիւններ պէտք է գործող կերպով մասնակցեն հասարակական կեանքի հիմնական բարեփոխութեան։ Մասսայական բը-

նոյթ կրելով հանդերձ՝ դա մեծապէս գիտակցական գործ է լինելու։

Անգամ Մարքսն ու Էնգելսը շեշտել են մարդկանց յեղափոխական դերը սոցիալական շարժման մէջ։ Առաջնի կարծիքով «մարդիկ են ըստեղծում իրենց պատմութիւնը»։ Իսկ երկրորդը աւելի ճիշտ և մանրամասն է որոշում յեղախոխական շարժման կամ պատմական շարժման յեղափոխական բնոյթը. նա ասում է.— «Պատմական գործօն ուժերը ազդում են այնպէս՝ ինչպէս բնութեան ուժերը— կուրօրէն բռնի, աւերիչ՝ քանի դեռ մենք դրանց չենք ճանաչել և հաշուի առել։ Իսկ երբ մենք արդէն դրանց ճանաչել, դրանց գործնէութիւնն ու ուղղութիւնը, դրանց ազդեցութիւնները ըմբռնել ենք՝ ապա մեզնից է միայն կախուած, կամաց-կամաց դրանց մեր կամքին ենթարկելու և դրանց միջոցով մեր նպատակներին

հասնելու։ Եւ այս աւելի ևս ճիշտ է այսօրուայ հզօր արդիւնաբերական ուժերի մասին...» («Գիտութեան յեղաշրջումը պ. Է. Դիւրինգի միջոցով», գերմ. 7-րդ հրատ. եր. 300-302)։

Թէև Էնգելս չի կարողանում այս ճիշտ տեսակէտը մինչև վերջ հետևականօրէն պահպանել և նորից դիալեքտիքական ինքնաբացատման ցնորաբանութեամբ տարուելով ասում է, որ կապիտալիզմը «ինքն իրեն աւելորդ է դարձնում» և ներկայ պետութիւնը «ոչ թէ վերացնում է, այլ ինքն-իրեն մեռնում» (նոյն տեղ, եր. 30 -300),— բայց և այնպէս նրա վերոյիշեալ տեսակէտը միանգամայն ճիշտ է և գերազանցօրէն յեղափոխական։ Յեղափոխական է այն պատմաբանութիւնը՝ թէ քաղաքակրթութեան առաջին օրերից, մարդկային մտքի առաջին դիտակցական ցոլքերից իվեր մարդս յեղափոխական դեր ունի

իր պատմութեան մէջ։ Բնութեան ուժերի ճանաչողութիւնն ու դրանց իր նպատակներին ծառայեցնելը, գործիքներ ու արդիւնագործական միջոցներ ստեղծելը ինքնին արդէն յեղափոխական գործ է։

Եւ այսպէս քանի գնում՝ աւելի ու աւելի է ընդարձակւում մարդուս յեղափոխական գործունէութեան ասպարէզը։ Նա աւելի ու աւելի ներգործող մասնակցութիւն է ունենում պատմութեան անցին ու դարձին։ Որքան զարգանում է նրա գիտակցութիւնը՝ այնքան զօրեղանում է նրա յեղափոխականութիւնը։ Եւ այսօր արդէն, կուլտուրայի զարգացման այս աստիճանում ամբողջ ժողովրդական զանգուածներ ընդհանուր դասակարգային և համամարդկային իդէալների գիտակցութեամբ ու նպատակադրութեամբ ձգտում են յեղաշրջել, արմատապէս բարենորոգել ներկայ

հասարակական կեանքը։ Եւ դարձեալ էնգելսն է, որը ուրախութեամբ մատնանշում է, որ այժմ արդէն բընութեան ստրկութիւնից ազատագրւում է մարդը և բնութեան տէրն ու իշխանը դառնում։ Թէ իր բնական միջավայրի և թէ իր կեանքի հիմնական փոփոխութիւնը այժմ արդէն մարդու «իր ազատ գործն է»։ «Ստար օբիեկտիւ ուժերը, որ մինչեւ այժմ գերիշխում էին նրա պատմութեանը՝ մտնում են հէնց իր՝ մարդու իշխանութեան ուն սկողութեան տակ։ Այսուհետև միայն մարդիկ պէտք է կատարեն իրենց պատմութիւնը լրիւ գիտակցութեամբ։ Այսուհետև միայն նրանց միջոցով շարժման մէջ դրուած հասարակական պատճառները մեծ չափով և էապէս իրենց կամեցած հետևանքները կունենան։ Դա մարդկութեան ազատական ոստիւնը, թռիչքն է անհրաժեշտութեան ստրկութեան թագաւորութիւնից դէպի ազատութեան

թագաւորութիւնը։ Աշխատրհի ազատագրութեան այս մեծ գործը ներկայ պր լեռարիատի հատուկական կոչումն է» (նոյն տեղ, 305—306 եր.)։

Այս չափազանց ուշագրաւ ու նշանակալից տողերը նորից շեշտում են պատմութեան յեղափոխական ըմբռնումը և ընդգծում մասնաւորապէս սոցիալիստական յեղափոխութեան ուղին։ այդ ամենից անկասկածօրէն հետևում է, որ սոցիալիստական եղափոխութիւնն ևս մարդկանց, այսինքն դրանով շահագրգիռ դասակարգերի ազատ ու գիտակից, այսինքն յեղափոխական կամեցողութեան ու գործողութեան արդիւնքը պէտք է լինի։ Սոցիալիզմը ոչ թէ «ինքն իրեն» պետք է «ընտանեշրաժեշտօրէն գայ, այլ մենք պարտաւոր ենք այդ կամենալ և իրագործել։ Դա ոչ թէ մի բանական—տրամաբանական, այլ մի պատմական բարոյական անհրաժեշ-

տութիւն է։ Սոցիալիզմը պկտք է իրականացնի մարդկանց քննադատող ու խորտակող մտքի աշխատանքով, բարի և բարոյական կամքով և յեղափոխական գործունէութեամբ։

Սոցիալական շարժումները ոչ սոսկ բնական, ոչ էլ տրամաբանական (դիալեքտիքական !) շարժումներ են։ Դրանք իւրայատուկ բարդ պրոցէսներ են իրենց ուրոյն կանոններով և ուղղութեամբ (տենդենցով)։ Դրանք կուլտուր-պատմական նպատակաւոր շարժումներ են, որ կատարւում են մտածող և կամեցող, գործող մարդկանց գիտակցական նպատակադրութեամբ և նպատակ արմատ միջոց երի ծրագրուած։ Այդպիսին է մանաւանդ սոցիալիստական շարժումը։ Սա էլ մի գերազանցօրէն նպատակաւոր շարժում է, որ ունի մի շատ որոշ իդէալ—ցանկալի ու բարձր նպատակ։ Սոցիալիստականը—ազատ, հաւասար ու

եղբայրացած հասարակութիւնն է
այդ իդէալը. որ գիտակցում, սիրում
ու կամենում են բոլոր շահագրգռ-
ւած դասակարգերը։ Բոլոր երկիր-
ների աշխատաւորութիւնը այդ իդէ-
ալին հասնելու համար կազմակերպ-
ւած կուսակցութիւններով և շատ որոշ
հիմնաւորուած ու բանաձևած ծրագիր-
ներով հետևողական դասակարգային
կռիւ և շատ ուղղորդած սոցիալական
քաղաքականութիւն է վարում. Ուս-
տի սոցիալիստական շարժումը մեծ
ապէս նպատակաւոր, գիտակից ու
յեղափոխական շարժումն է։ Սոցիալիս-
տական յեղափոխութիւնն էլ—հասարա-
կութեան կապիտալիստական ձևից սո-
ցիալիստականի անցումը—մարդկանց
գիտակից ու յեղափոխական կամեցո-
ղութեան և նպատակայարմար գործու-
նէութեան արդիւնք պէտք է լինի։
Սոցիալիզմը որոշ կուլտուր-էթիկական
անհրաժեշտութիւն է և կիրականացի

միայն տնտեսապէս շահագրգիռ դասակարգերի և կուլտուր-բարոյապէս շահախնդիր անհատների գիտակցական աշխատանքով, վճռական կամեցողութեամբ և յամառ յեղափոխական գործնէութեամբ։ Սոցիալիզմը ոչ միայն մի նոր արդար ու հաւասար տնտեսութեան, այլ և մի նոր կուլտուրայի, նոր բարոյականութեան ու հոգեբանութեան հարց է։ Դա մի նոր Կուլտուրական Վերածնունդ է, իրօք որ մի մասսայական «բուիչ տարկութեան թագաւորութիւնից դէպի ազատութեան թագաւորութիւնը»։

Այդ թռիչքը, անշուշտ, իրրև այդպիսին յեղափոխական թռիչք է, բայց յեղափոխական—բառի ամենալայն առումով։ Դա աւելի օրգանական՝ քան տարերային-կատաստրոֆային բնոյթ է կրելու։ Նորը ծնւողը սաղմնաւորւելու ու զարգանալու է հնի մէջ։ Դա հնից ժառանգելու է այն բոլոր օրգան-

ներն ու ֆունկցիաները, որ կենսական անհրաժեշտություն են նորի ինքնապահպանման ու ինքնազարգացման համար։ Ուրեմն սոցիալիստական հասարակությունը ծնելու ու զարգանալու է կապիտալիստական հասարակությունից։ Նա վերջնիս մեջ իր տիրապետության համար գտնելու է որոշ սոցիալ-պետական սարք ու կարգ և որոշ կուլտուր-տնտեսական հիմունքներ։ Սոցիալիզմը կապիտալիզմի բացարձակ բացասումով կամ սոցիալական «ոչնչից» առաջ գալ չէ կարող։ Կատարող փոփոխությունը կամ «յեղափոխությունը» բացարձակ հակասության կամ տարամերժ բացասման իմաստով չպետք է հասկանալ։ Նորը պետք է առաջ գայ ոչ թե հնի բացարձակ ժխտումով կամ ոչնչացումով, այլ հնի կերպարանափոխումով։ Բանակը — կուլտուր-տնտեսական արժեքները մնալու են, որոնց

է փոխուելու։ Սոցիալիզմը չէ ծնուելու պատրաստի, որպէս Աթենաս-Պալլասը Զևսի գլխից։

Ո՛չ։ Դա ծնուելու է իբրև նորածին զաւակ նախօրօք սաղմնաւորելով, գոյանալով իր ծնողի արգանդում կապիտալիստական կարգերում կամ «նեբաճելով» «eiwnachsen»—դրա մէջ, ինչպէս Լիբկնեխտն է ասում։ Եւ ծնուելու, է անտարակոյս, երկաւնիոմ, «յեղափոխական» գործողութեամբ և երկունքի որոշ ցաւերով՝ նայած երկունքի աւողջ, բնական և վատաւողջ, անբնական լինելուն։ Այս օրգանական ծընունդի ու յեղափոխութեան գեղեցիկ բացատրութիւնը տալիս է Կ. Կաուցկին։ Նա ասում է, որ եթէ «կապիտալիստական գործող հիմնարկութիւնները»—երկաթուղիներ, գործարաններ, մինիստրութիւններ և այլն—պէտք է փոխուեն—յեղափոխուեն «սոցիալիստական գործող հիմնարկութիւնների»,

թէ «կապիտալի օրգաններից պէտք է դառնան բանւոր դասակարգի օրգաններ ոչ այլ կերպ, բայց եթէ մի անգամից և իր բոլոր մասերով, ապա այդ կարող է տեղի ունենալ բոլոր հասարակական օրգանների զարգացման որոշ աստիճանում միայն։ Բայց, ի հարկէ, հասարակութեան համար չ կարելի այդ այնպիսի ճշտութեամբ որոշել, որպէս մայրական օրգանիզմի համար՝ թէ երբ կհասնի հասունութեան պահանջած ժամը». *)

Ապա Կաուտսկին շեշտում է, որ չնայած դրան՝ երկունքի, կենդանական ծնունդի և սոցիալական յեղափոխութեան գործողութիւնների մեծ նմանութիւն կայ։ Հակառակ բուրժուական մտայնութեան, որ վախենում է բնութեան մէջ յեղափոխ

*) К. Каутскій: «Соц. реформа на другой день после соц. реформы» 1905 г. стр. 17

կան ակտ, արմատական փոփոխու-
թեան երևոյթները ճանաչել, մենք
տեսնում ենք, որ բնութիւնն ևս
թռիչքներ» է կատարում։ Բնութեան
էվոլիւցիան ևս կատարւում է որոնք
մասնակի կատաստրոֆներով կամ
էվոլիւցիայով»։ Այդպիսի կատաս-
տրոֆներից կամ յեղափոխական ակ-
տերից են, օրինակ՝ ծնունդը և ճտի
ուի կճեպը կոտրելը և լոյս աշխարհ
գալը։— Ծնունդի ակտը թռիչք է ա-
նում է Կաուտսկին։ Սաղ մը, որ մայ-
ական օրգանիզմի մի մասն է կազ-
նում, նրա հետ ընդհանուր արիան
ջանառութիւն ունի, նրանից սնունդ
ստանում, չի շնչում—ծնունդից յե-
տոյ մի անգամից ինքնուրոյն մարդ-
ային արարած է դառնում՝ սեփա-
ական արեան շրջանառութեամբ, մի
արարած, որ շնչում է ու ճչում, ըն-
ունում է սեփական կերակուրը և
ստաթորում իր աղիքներով»։

«Երկունքի ու ծնունդի և յ՝ղափոխութեան նմանութիւնը միայն գործողութեան թռիչքանման լինելով չէ սահմանափակւում։ Գործին մօտից նայելով՝ տեսնում ենք, որ այդ թռիչքանման փոփոխութիւնը ծնունդի ժամանակ միայն ֆունկցիաների (գործողութիւնների) մէջ է կատարւում։ Իսկ օրգանները (գործարանները) շատ դանդաղ են զարգանում. և դրանց զարգացման որոշ աստիճանում է միայն հնարաւոր դառնում այն թռիչքը, որ մի հարւածով, միանգամից հարկադրում է դրանց գործել։ Իրենց ֆունկցիաները կատարել։ Եւ եթէ թռիչքը կամ ոստիւնը զարգացման այն աստիճանից վաղ է կատարւում՝ այդ դէպքում ոչ թէ օրգանները սկսում են գործել, իրենց ֆանկցիաները կատարել այլ դադարում ու գործելուց, և նոր էակը մեռնում է... Մոիս կողմից էլ սաղմի «օրգան-

ների զարգացման որոշ աստիճանից յետոյ ա խուսափելի է դառնում այդ յեղափոխական ակտը... Ապա ծնընդեան ակտը ոչ թէ մարդկային օրգանների զարգացման վախճանը, այլ մի նոր շրջանի սկիզբն է նշանակում. . Նոյն բանը մենք տեսնում ենք նաև հասարակութեան մէջ։ Այստեղ էլ յեղափոխութիւնները դանդաղ, աստիճանական զարգացման (էվոլիւցիայի) արդիւնքներ են։ Այստեղ էլ դանդաղ են զարգանում միայն հասարակական օրգանները, իսկ կարուկ կերպով, մի հարուածով, յեղափոխականօրէն կարող են փոխուել դրանց ֆունկցիաները...—Ճիշտ այդպէս նաև սոցիալական յեղափոխութիւն չի նշանակում՝ թէ դրանով վերջանում է սոցիալական էվոլիւցիան (զարգացումը), այլ այդ նշանակում է, որ հասարակութեան համար զարգացման նոր շրջան է սկսւում։ Սոցիալիստական յեղափո-

խութիւնը «կարող է գործարանը կապիտալիստական մասնաւոր սեփականութիւնից համայնական սեփականութիւն դարձնել մէկ հարուածով», բայց կապիտալիստական ձեռնարկութիւնները իրենք իրրև հասարակական օրգաններ պէտք է աստիճանաբար զարգանան (Նոյն տեղ, եր. 15, 16, 17...—)։

Ահա այսպէս ենք մենք պատկերացնում սոցիալիստական յեղափոխութիւնը, հասարակական կապիտալիստակ ն բովանդակութեան սոցիալիստական ձեւ ու կազմակերպութիւն ընդունելը։ Դրա համար որոշ սոցիալ-տնտեսական տուլեաներ ու հիմունքներ պէտք է լինին։ Երբ սոցիալիզմի իրականացման համար այդ կապիտալիստական-տնտեսական նախապայմանները կան, ապա սոցիալիստական յեղափոխութիւնը հնարաւոր է և պէտք է լինի։

Այժմ անցնենք այդ պայմանների քննութեան։

— Սոցիալիզմը աշխարհ է գալու հին կապիտալիստական կարգերի շորերով ու կապերով խանձարուրված, ասել է Կ. Մարքսը։ Կապիտալիզմի արգանդում սաղմնաւորելով՝ դա զարգանալու է աստիճանաբար։ Դա ստեղծելու է հնից։ Ուստի և իր զարգացման համար սոցիալիզմը պէտք է ունենայ որոշ սոցիալ-տնտեսական, կուլտուր--պատմական և հոգեբանական հիմունքներ։ Առանց այդ տեսակների սոցիալիզմը առաջ գալ կամ սոցիալիստական յեղափոխութիւն լինել չէ կարող։

Ամենից առաջ պէտք է ենթադրել կապիտալիստական տնտեսական զարգացման որոշ աստիճան։ Պէտք է աշխատանքը որոշ չափով ընկերային դարձած լինի, որպէսզի հնար լինի ընկերային սեփականութեան մասին մտածել։ Ներկայ արդիւնագործութեան համայնական եղանակն է, որ հարկա-

դրում է նաև դրա համայնական սեփականության մասին մտածել։ Կապիտալիստական համայնական արդիւնագործութիւնը ստեղծում է ապագայ սոցիալիստական տնտեսութեան ոչ միայն տնտեսական, այլ և հոգեբարոյական հիմունքները։ Արդի գործարաններն ու արհեստանոցներն ոչ միայն մարդկանց միասին համերաշխ աշխատել են սովորեցնում, այլ և մի նոր հաւաքական, ընկերային հոգեբանութիւն ու բարոյականութիւն են մշակում։ Հաւասար ու միասին աշխատանքից բղխում է նաև միասին տիրելու կամ համայնական սեփականության ու հաւասարութեան գիտակցութիւնը։ Ուրիշ խօսքով անհատապաշտ (ինդիվիդուալիստական) կապիտալիզմը իր սոցիալ-տնտեսական պայմաններով սոցիալիստական է դաստիարակում։

Ընդունելով և շեշտելով սակայն, որ

կապիտալիզմը որոշ չափով սոցիալիստական հասարակութեան հիմքերն է դնում, սխալ է կարծել, որ դա ինքնին արդէն, անխուսափելիօրէն մեզ կտանի դէպի սոցիալիզմ։ Այս թիւր կարծիքը առաջ է եկել «կապիտալի կենտրոնացման» մասին մարքսիստական բացարձակ ու միակողմանի տեսակէտից։ Այժմ սակայն գիտութիւնը ժխտում է՝ թէ այդ և թէ դրան յարակից այլ մարքսիստական քաղաքատնտեսական տեսակէտների բացարձակ ճշտութիւնը և ցոյց տալիս, որ սոցիալիզմի տիրապետութիւնը կապիտալիստական-տնտեսական տեսակէտից ապահովուած չէ։ Կապիտալիստական տնտեսութեան որոշ չափով հակասական ու ներհակ դրութիւնը բացարձակ անհրաժեշտութիւն չէ դարձնում սոցիալիստական տնտեսութիւնը։

Արդէն մարքսիստ քաղաքատնտե-

սագէտներն անգամ մերժում են «կապիտալի կենտրոնացման» տեսութեան բացարձակութիւնը։ Նոյն իսկ ուղղափառ մարքսիստ Կ. Կաուտսկին յայտարարելով, որ այդ «հիմնական կէտում» նա իր հայեացքը փոխել է, որովհետև «մանր տնտեսութիւնները ոչ թէ ոչնչանում, այլ բազմանում են», ընդունում է, որ դրանք պէտք է իրենց գոյութիւնը պաշտպանեն նաև սոցիալիստական հասարակութեան մէջ (տես՝ «Էրֆուրտի ծրագրի» նախաբանը և «Սոց. յեղափոխութիւնը»..եր. 148»։

Դրա հետ վերաքննւում է և այն մարքսիստական հայացքը՝ թէ կապիտալիստական տնտեսութիւնը մի ամբողջովին հակասական ու աննկարագրելի սոցիալական դրութիւն է և պէտք է ինքն իրեն, բնականօրէն խորտակւի։ Հակառակ Մարքսի և Էնգելսի քրթնաջան գ տական աշխատանքներին՝ նրանք չաջողեցին ապացուցել,

որ կապիտալիստական հասարակակարգը անեսապես յարատեւել չի կարող։ Զարգացման որոշ աստիճանի վրայ, նրանց կարծիքով, դա պէտք է մեռնէր իր բնական մահով, որովհետեւ դա աւելի է արտադրում՝ քան տարածում— սպառում։ Ապրանքների զեռարտադրութիւնն ու շուկաների պակասը պէտք է ստեղծեն օրհասական տնտեսական ճգնաժամեր ու շահի տոկոսի անկումն։ Պարբերական ու խրոնիքական ճգնաժամերը ուժասպառման մահացու հարուածներ պէտք է հասցնեն յարաճուն կապիտալին։

Կապիտալիստական տնտեսութիւնը աւելի է արդիւնագործում՝ քան իր հասարակութիւնը սպասել կարող է, փաստաբանում է և Կ. Կաուտսկին։ Առաջինը սահմաններ չի ճանաչում, մինչդեռ սպառման թէ արտաքին և թէ ներքին շուկաները սահմանափակ են։— «Արդիւնագործութեան կապիտա-

լիստական եղանակը անհնարին կը-դառնայ այն պատմական բոպէից, երբ վերջնականապէս կորոշի, որ շուկան չէ կարող նոյն արագութեամբ լայնանալ՝ ինչպէս արդիւնագործութիւնը, այսինքն երբ գերարտադրութիւնը կդառնայ խրոնիքական»։

Եւ բ ակա՝ արար նաև քաղաքատնտեսութեան մէջ ֆատալիստ մարքսիստին թւում էր՝ թէ մօտ է այդ ժամը։ Կապիտալիստական տնտեսութեան այդ անբուժելի խրոնիքական հիւանդութիւնը «ներկայ հասարակութեան կենսունակութեան ծայր աստիճանն է»։ Կապիտալիզմի զարգացման գերագոյն աստիճանը (?) դրա մահուան ժամն է։ Դրա զարգացման բնական ընթացքը բնականօրէն ու ճակատագրականօրէն տանում է դէպի դրա խորտակումն, դէպի սոցիալիստական յեղափոխութիւն։

Սակայն այդ տեսակէտը միայն մի

քաղաքատնտեսական դոգմ է—մի «գիտական (!) հաւատ», որի համար ևս պէտք է ասել—երանի՜ «սրտով սրբերին», պարզամիտ ու. միամիտ հաւատացողներին, որովհետև նրանք կգտնեն տենչած սոցիալիստական «թագաւորութիւնը»։ Իսկ գիտական մտքի սպասաւորների համար, նրանց, որոնց համար գիտութիւնը և մասնաւորապէս քաղաքատնտեսութիւնը Կ. Մարքսով չէ սկսւում ու... վերջանում՝ գիտութիւնը միշտ նոր խօսք ունի ասելու։ Նրանց համար, ովքեր գիտութեան նկատմամբ իդեալից էլ չեն կաշառւում ու նախապաշարւում և գիտութիւնը յարմարեցնում իրենց իդեալներին (օր՝ Մարքսեան քաղաքատնտեսութիւնը, պատմափիլիսոփայութիւնը և այլն), —այդպիսիների համար գիտութեան ճանապարհը ոլոր-մոլոր է և ոչ այնպէս ուղղագիծ, որպէս մարք սիդմի մէջ։ Դժբախտաբար ճիշտ է, որ

դէպի իդէալն ու ճշմարտութիւնը տանող կարճ ճանապարհը ուղիղ գիծը չէ։

Մարքսիզմի ցոյց տուած ճանապարհը դէպի «աղատութեան թագաւորութիւնը» որքան որ ուղղագիծ և որոշ է՝ նոյնքան և աժեարանցանելի է։ Միայն այդ ճանապարհով դէպի սոցիալիզմ գնալ չի կարելի։ Ապրանքների գերարտադրութեան և շուկաների ու ճրգնաժամերի թէօրիաները նոյնպէս պէտք է վերաձնահատման ու վիր քննութեան ենթարկուին՝ ինչպէս աշխատավարձի «երկաթէ օրէնքի», «կապիտալի կենտրոնացման», կատաստրոֆների» և այլ թէօրիաները։ Այդ բոլորը միրան անկասկած պէտք է դարձնեն, որ սոցիալիզմի տիրապետութիւնը ապահովուած չէ նաև տնտեսապէս, և մասնաւորապէս Մարքսեան քաղաքատնտեսութեան օրէնքներով։

Մ. Տուգան-Բարանովսկին քննադատելով «մարքսիզմի գլխաւոր սե-

սական հիմունքները» գտնում է, որ կապիտալիստական տնտեսությունը այնպիսի «աննեղդաշնակ ու հակամարտ» տնտեսություններից չէ, որ խորտակվի ինքն իրեն, ներքին տարամերժ հակասություններից։ Այդ հակասություններից մեկն է գերարտադրությունն ու նեազ սպառումն, բայց և այնպէս,— ասում է Տուգան-Բարանովսկի,— «կապիտալիստական տնտեսությունը ենթակայ չէ խորտակման, եթէ անգամ ժողովրդական սպառումը բացարձակ մեծ չափով կրճատվի։ Շուկաների անբաւարար թվի պատճառով արդիւնագործության կապիտալիստական եղանակի խորտակման անխուսափելիությունը,— որ ոչ միայն «ուղղափառների» այլ, ինչպէս երևում է, նաև մի քանի «ռէվիզիոնիստների» հաւատի խորհրդանիշն է—դատարկ ցնորք է։ Ներկայ հասարակության կապիտալիստական կեղևը չի սպառ-

նում «պայթելու» նաև այնպիսի պայմաններում, որոնք, ըստ երևոյթին, կհակասեն տնտեսական բոլոր բնական պահանջներին»*)։ Նա ապացուցանում է, որ կապիտալիստական տնտեսութեան ամենաներգաշնակ ու հակասական երևոյթը — նեղոգոյն սպառումն ևս դրա խորտակման պատճառ չի դառնայ։ Կապիտալը կարող է արդիւնագործել «անվերջ, մինչև նիւթերի բնական աղբիւրների սպառումն»։ «Ապրանքների համեմատաբար նեղ պահանջը չի կարող դրանց արդիւնագործումը կրճատել և դրանով կապիտալիստական տնտեսակարգի խորտակումն առաջ բերել»։

Կապիտալիստական տնտեսակարգն, ուրեմն իբրև ինքնին անհերդաշնակ ու

*) Мих. Туганъ-Барановскій: Теоретическія основы Марксизма 3-е изд. С. П. Б. 1906 г. стр. 210, 213, 219, 222 և շարուն.։

հակամարs տնտեսակարգ, որ բնաւ նկատի չունի արդիւնադործողների կարիքն ու սպառման չափը, չի խորտակի այն «անլուծելի (!) ներքին հակասութիւնից», որի վրայ իր ամամբողջ յոյսը դրել էր Կ. Մարքսը։ Նախկին «հակամարտ» տնտեսակարգերի նման, որպէս սարկականն ու ճորտականը, երբ արդիւնաբերողը տնտեսական օբեկտն էր միայն և ոչ նաև սուբեկտը, կապիտալիստական տնտեսակարգն ևս, կարող է իր գոյութիւնը շարունակել — աւելացնելով հասարակական հարստութիւնը (տպրանքները)։ բայց ոչ սպառումը։ Իբրև էապէս «աններդաշնակ» տնտեսութիւն, հակառակ նախնական ընտանեկան, արհեստակցական և սոցիալիստական «ներդաշնակ» տնտեսակարգերի, կապիտալիզմը ծնելով հակասութիւններ՝ չի հասնում ինքնաբացասման։ Ինքնահակասութիւնը տնտեսութեան մէջ ոչ

հոմանիշ ոչ էլ հաւասար է ինքնաբացասման։ Այս է ահա Մարքսի ամենամեծ սխալը, որ նա տնտեսական օրինաչափութիւնը շփոթել է տրամաբանականի հետ։ Կապիտալիստական հասարակարգի մէջ որոշ հակասութիւն կամ հակամարտութիւն տեսնելով՝ նա տրամաբանական — դիալեկտիքական մարդանքներով յանգել է դրա տրամաբանական (անխուսափելի) բացասման։ Սոցիալ-կուլտուրապէս վատը և տնտեսապէս աններդաշնակն ու հակասականը նրան տրամաբանօրէն անեւակայելի, անհնարին են թւացել երեւոյթների զարգացման որոշ աստիճանում։

Ահա թէ ինչու այն՝ ինչ ըստ մարքսիզմի շատ «որոշ» ու պարզ է, մեզ համար շատ անորոշ ու բարդ է։ Նաև տնտեսական տեսակէտից սոցիալիստական յեղափոխութիւնը մի բնաանհրաժեշտ ու անխուսափելի երեւոյթ

չէ։ — «Կապիտալիստական տնտեսութիւնը չէ պարունակում իր մէջ այնպիսի մոմենտներ (հանգամանքներ), որ նրա յետագայ զարգացումը տընտեսապէս անհնարին դարձնեն», գրում է Տ.—Բարանովսկին։ Կապիտալիզմի մէջ մի հակասութիւն կայ, անշուշտ, որ «երկաթէ անհրաժեշտութեամբ պէտք է դրան բարձր ձևի փոխի»։ Սակայն կապիտալիստական մոխիրից սոցիալիստական փենիքսի կենդանանալը չի կատարուի տնտեսական հակասութիւններից։ Ո՛չ. դա կը կատարուի այն անլուծելի հակասութեան ու հակամարտութեան շնորհիւ, որ կայ մեր տնտեսակարգի և մեր բարոյականութեան մէջ։

Կապիտալիզմը վատ է ոչ թէ տընտեսապէս, այլ կուլտուր-բարոյապէս *)։

*) «Եթէ կապիտալիզմը միայն տնտեսապէս վատ լինէր՝ Մարքսը իր «Կապիտալը չէր գրի», ասում է Մաս-

Դա մերժելի ու բացասելի է իբրև մի «ոնեերգաշնակ» տնտեսակարգ, ուր մարդս «լոկ միջոց» է և ոչ «նաև նպատակ կամ օբեկտ՝ և ոչ նաև սուբեկտ, արտադրողն է և ոչ նաև վա-

---

բոշումներն ու որակումները գերազանցօրէն էթէքական են։ Տես նաև մատ ապագա ում լոյս տեսնելիք «Սոցիալիզմ և բարոյագիտութիւն» գրգոյկը Վ. Խորէնիի, ուր այս տեսակէտը մանրամասն պարզաբանուած է։

սարիկ։ Որ Մարքսին ևս զե ավարել է սոցիալ էթիքական և կուլտուրական տեսակէտը—կասկածողները թող այս տեսակէտով կարդան «Կապիտալն» ու «Կոմմուն. Մանիֆեստը» և մասնաւորապէս առաջինի հետևեալ երեսները, 1905 թ. ռուս. հրատ. I հատոր 125, 129, 144, 149—150, 187, 222, 244, 262, 263—291, 310—314, 345—350, 369, 346—347, 670—671 և այլն։ այստեղ բոլոր քաղաքատնտեսական ո-

յելողը։ Կապիտալիզմի հիմնական հակասութիւնը, որի համար պէտք է նրան յեղափոխականօրէն բացատել, այն է, որ արդիւնաբերողը իր աշխատանքի տէրը չէ, այլ դրա ստրուկը, որ աշխատաւորը բաժանուած է իր աշխատանքից մինչդեռ «ներդաշնակ» տնտեսութիւնների մէջ, որպիսին պէտք է լինի և սոցիալիստականը, աշխատաւորը միացած է իր աշխատանքի հետ. նա ոչ միայն իր աշխատանքի արդիւնքի ստեղծողը, այլ և տէրն ու վայելողն է։ Սոցիալիզմը ձգտում է միացնել աշխատաւորին իր աշխատանքի հետ, ազատել մարդուն իր ձեռքի ու մտքի արդիւնքների—ապրանքների ստրկութիւնից (Կ. Մարքս) և դարձնել նրան դրանց սուբեկտը։—մի ինքնանպատակ արարած։

Հետևաբար կապիտալիստական տնտեսակարգի բացատումն ու խորտակումը մենք ոչ տնտեսական՝ ոչ

էլ տրամաբանական (!) գործողություն ենք համարում։ Ո՛չ։ Դրա բացատրությունը գերազանցորեն կուլտուրա-էթիքական հարց է։ Դա բացատրելի է, որովհետև ինքն արդեն ստեղծել է այն միջոցները, մեքենաները, որով դեռ ևս Արիստոտելի մարգարեացությամբ անկարևոր ու անընդունելի է դառնում մարդուս ստրկությունը։ Եւ քանի որ կապիտալիստական կուլտուրան ու տնտեսությունը իրենց բարբարոս հետևանքներով (Կ. Մարքս) միանգամայն ներհակում են ազատության, արդարության և հաւասարության մեր բարոյական սկզբունքներին, ուստի և դրանք պէտք է մ ըժւեն, խորտակ։ են—յեղափոխեն։

Եւ պէտք է յեղափոխեն ոչ թէ «ընտանեհրաժեշտօրէն», իրենք իրենց—«կապիտալիստական արդիւնագործության ներքին օրէնքների խաղով»։ Ո՛չ, այդպէս դրանք չեն

փոխուի։ Կապիտալիստական հասարակակարգը պէտք է «բացասուի» յեղափոխականներէն։ դիտակից, գաղափարական ու ներգործող մարդկանց մտքի, խղճի և կամքի թելադրութեամբ։ Սոցիալիստական յեղափոխութիւն պէտք է կատարուի մեր բանական ու բարոյական կամեցողութեամբ և գործողութեամբ։ Սոցիալիզմը ոչ տնտեսական (!), ոչ տրամաբանական (!), ոչ էլ բնական (!) անհրաժեշտութիւն է։ Դա էապէս և գերազանցօրէն կուլտուր-էթիքական եւ սոցիալ-յեղափոխական անհրաժեշտութիւն է։ Սոցիալիզմը պէտք է գայ, «բայց մարդկութիւնը այդ նոր հասարակակարգը չի ստանալու իբրև տնտեսական ուժերի կոյր խաղի պարգև, ասում է Տուգան-Բարանովսկի,—նա պէտք է այդ նոր կարգը գիտակցօրէն մտակէ և նուաճէ։ Կապիտալիզմը երբէք չի մեռնի բնական մահով.—դը-

բան մահացու հարուած կարելի է հասցնել միմիայն մարդու մտքով ու կամքով»։ (Նոյն տեղ, եր. 227—229

Սոցիալիստական յեղափոխութեան անտեսական պայմանների քննութիւնը ցոյց տուեց, որ թէև տնտեսութեան զարգացումը—կապիտալիզացիան ինքնին գեռևս սոցիալիզմ չէ ստեղծում, բայց դա անհրաժեշտ նախապայմաններից մէկն է հասարակական կեանքի այդ մեծագոյն փոփոխութիւնը կատարելու համար։ Դրանով հերքւում է միանգամայն «կատաստրոֆների թէորիան»՝ թէ սոցիալական յեղաշրջման ամենալաւ միջոցը թշուառացած մասսաների ըմբոստացումն է։ Այսօր միանգամայն անընդունելի է այն կարծիքը՝ թէ սոցիալական բարենորոգումները ընդատում են սոցիալիստական շարժման ու յեղափոխութեանը։ —«Ո՛րքան վատ՝ այնքան լաւ», ասինքն որքան մասսաները թշուառանան՝

այնքան պահանջկոտ, ըմբոստ ու յեղափոխական կլինեն—ողբերգական ու հակատագրական տեսակէտը այսօր կորցրել է ամեն մի քաղաքական իմաստ։ Այսօր անվիճելի և ընդունելի է այն հայեացքը, որ սոցիալիզմը մի ստեղծագործ, գիտակցական և կուլտուրական աշխատանք է և տարերային կամ կատաստրոֆային բնոյթ կրել երբէք չէ կարող։

Ընդհակառակը, սոցիալիստական յեղափոխութեան համար պէտք է հասարակութիւնը որոշ կուլտուրական զարգացման հասած լինի. նա պէտք է ունենայ—1. որոշ տնտեսական զարգացում և հարստութիւն (կապիտալիզացիա),—2 զարգացած տեխնիկա,—3. հասարակական-պետական սարք ու կարգ (մեխանիզմ),—4. որոշ բարեկեցութեամբ մեծամասնակ ու գիտակից—սոցիալիստօրէն դաստիարակուած—աշխատաւոր դասակարգեր, 5. սոցիա-

գոյութիւնը դրա համար։ Առանց այս օբեկտիւ պայմանների, առանց սոցիալ-կուլտուրական զարգացած մեխանիզմի աշխատաւոր սոցիալիստական դասակարգերը իշխանութիւն ձեռք բերել և բուրժուազիայինփոխարինել—կուլտուրա ստեղծել չեն կարող։

—«Սոցիալական յեղափոխութիւնը ամենամեծ յեղաշրջումն է, որ երբ և է տեսել է համաշխարհային պատմութիւնը,—գրում է մարքսիստ Ն. Բոժկով։ Դա ամբողջ ժողովրդին մեծ բարիքներ է խոստանում։ Ուստի և զարմանալի չէ, որ կան անհամբեր մարդիկ, որ պատահում են տաք գլուխներ, որոնք պատրաստ են այժմ և եթ այդ գլուխ բերելու *)։Կարելի է ըն-

*) Համեմատել բոլշևիկեան կառավարութեան Ռուսաստանից «համաշխարհային սոցիալ(իստական յեղափոխութիւն» սկսելու փորձի հետ. նոյ. 2-ին Բոլշևիկ. կուսակցութեան Կենտր. Կոմիտէի բանաձևը այդ մասին ասում

դունել, որ դրանք անկեղծ, ամբողջովին և ջերմ կերպով ժողովուրդին նըվիրուած մարդիկ են, որ նրանք ազնիւ միտումներ ունին։ Բայց չի կարելի չընդունել նաև, որ դրանց բանականութիւնը թոյլ է գործում, որ դրանք կուրացած ազնիւ զգացմունքից՝ անընդունակ են մտածելու և կշռադատելու, որ սոցիալական յեղափոխութեան համար անհրաժեշտ տեսակները դեռ ևս

է։։։ «Կ. Կոմ. պնդում է, որ հակառակ բոլոր դժուարութիւններին սոցիալիզմի յաղթանակը թէ Ռուսաստանում և թէ Եւրոպայում ապահովւում է միայն ներկայ կառավարութեան անշեղ քաղաքականութեամբ։ Կ. Կոմ. լիապէս հաւատացած է այս սոցիալիստական յեղափոխութեան յաղթութեանը և կոչ է անում բոլոր կասկածոտներին և ուատանողներին թողնել ուատանումները և ամբողջ հոգով ու կամքով նեցուկ լինել ներկայ կառավարութեանը։։

չկան. արդիւնագործութեան կապիտալիզացիան դեռ ևս չէ հասել այն աստիճանին, որ ապահովէ սոցիալիստական հասարակութեան համար անհրաժեշտ հարստութիւնները բաւարար չափով, իսկ կենտրոնացումն էլ այնչափ չէ զարգացել, որ միացնէ և դիտակից դարձնէ ողջ պրոլետարիատ դասակարգին։ Սոցիալական յեղափոխութիւնը հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ կլինին հրաշալի մեքենաներ եւ այլ արդիւնագործական միջոցներ, որ հասարակութեանը կտան անքիւ քանակութեամբ անհրաժեշտ ու օգտակար իրեր, և երբ բանւոր դասակարդը կատարեալ դիտակցութեան եկած և միացած կլինի։ Իսկ քանի դեռ ոչ այս, ոչ էլ այն պայմանը կայ՝ սոցիալական յեղափոխութիւնը հնարաւոր չէ։ Սոցիալական յեղափոխութիւն անելու վաղաժամ, չափազանց շտապ փորձը կը-վերջանայ կատարեալ անաջողութեամբ,

պրոլետարիատի համար սոսկալի թշուառութիւններով և կարող է միայն երկար ժամանակով յետաձգել մեծ յեղաշրջումը» *)։

Ահա այն ընդհանուր տեսակները, որոնց մէջ միայն սոցիալիզմի իրականացման մասին խօսք կարող է լինել Այդպիսի մի անօրինակ կուլտուրապատմական յեղաշրջում անկարող է կատարել մի երկիր, ուր պրոլետարիատը շատ սակաւաթիւ է և գիւղացիութեան հետ տնտեսական ու հոգեկան թշուառութեան մէջ է ապրում։ Թշուառութեան մէջ անասնացած ու բթացած մասսաները մի այդպիսի մեծ, հոյակապ կուլտուրական վերա-

*) Н. Рожковъ: Капитализмъ и Соціализмъ, 907 г., стр. 26—29. Համեմատել՝ Эд. Бернштейнъ: Условія возможности соціализма... С. П. Б. 1906 г. стр. 24, 34, 36, 45, 112, 117—119, 219։

ինութեան անընդունակ կլինին։ Ա. գ-
պիսի մի բարդ, գիտակցական ու
ստեղծագործ աշխատանքի համար
պէտք է, որ նախ բարեբախտ աշխա-
տաւորութեան տնտեսականը, պէտք է
սոցիալական օրէնսդրութիւնն ու
բարենորոգումները (ութ ժամեայ բան-
ւորական օր, մինիմալ աշխատավարձ
աշխատանքի ու կեանքի ապահովու-
թիւն, հողի համար նպաստներ և այլն)
մարդավայել կեանք ստեղծած լինեն
աշխատաւորների համար։ Դրա հետ
պէտք է փոխուի նաև աշխատաւո-
րութեան հոգեբարոյական վիճակը.
պէտք է զարգանան սոցիալական ու
բարոյական զգացմունքները, սոցիա-
լիստական մտայնութիւնը... «արհեստ-
աւորական ու գիւղացիական արդ-
իւնագործութիւնից ուղղակի սոցիա-
լիզմի անցնելը անհնարին է ոչ մի-
այ այդ տնտեսական ձեռնարկու-
թիւնների նուազ արդիւնաւէտութեան,
այլ և հոգեբանական յատկութիւննե-
իր բացակայութեան պատճառով» (Կ.
Կաուտսկի)։

Ուրեմն սոցիալիզմը հնարաւոր կլինի

ոչ միայն կուլտուր-տնտեսական և հոգեբարոյական պայմաններում, երբ միայն կարող է զարգանալ սոցիալօրէն ազդող և սոցիալիստօրէն մտածող ուրոշ հասարակութիւն։ Եւ սա ընդհանուր հասարակութեան գլխաւոր մասը պէտք է կազմի։ Ուստի և դա միմիայն պրոլետարիաս դասակարգը կազմել չէ կարող, որ նոյն իսկ ամենազարգացած երկրներում հասարակութեան չնչին մասն է կազմում։ Ամենկողմից արդէն անհիմն ու մերժելի է այն տեսակէտը, որով յանուն քաքացած դոգմերի և ի վնաս պրոլետարիատի աշխատում են սոցիալիզմով կենսապէս շահագրգիռ աշխատաւոր գիւղացիութիւնը դուրս վտարել սոցիալիստական շարժումից։ Իրանով մարքսիստները ջլատում են պրոլետարիատի ուժ ը և վտանգում նրա ազատագրութեան գործը։ Մենք միմիայն՝ կամ «զուտ և անխառն» պրոլետարական սոցիալիզմ և սոցիալիստական յեղափոխութիւն ոչ ընդունում ենք, ոչ երևակայում։ Սոցիալիզմը, և մանաւանդ սոցիալիստական

յեղափոխութիւնը, ընդհանուր աշխատաւորական, այսինքն նահգիւղացիական ու մտաւորական լինելով միայն կարող է դրական կուլտուրական գործ դառնալ Սոցիալիզմի այս ամբողջական ըմբռնողութիւնը միայն կարող է այդ մի հզօր, անընկճելի կուլտուրական ոյժ դարձնել։ Զուտ պրոլետարական սոցիալիզմը շատ է վտիտ, թերի ու անկարող։ Ընդհակառակը, երբ յեղափոխական պրոլետարիատին միանայ բազմաթիւ աշխատաւոր գիւղացիութիւնը և քննադատօրէն մտածող, աւելի գիտակից, գաղափարական ու յեղափոխական մտաւորականութիւնը՝ ապա ա դ դէպքում սոցիալիզմը կը կարողանայ նւաճել աշխարհը և ամենամեծ կուլտուրական յեղափոխութիւնը կատարել։

Եւ վերջապէս սոցիալիզմը պէտք է իբրև մարդկային պատմութեան գերագոյն կուլտուր-բարոյական գաղափար համակէ և իր շուրջը համախմբէ նաև բարձր դասակարգերի ազնուասիրտ, բարոյական ու գաղափարական անհատներին (Կ. Կաուտսկի—

«Էրֆուրտի ծրագիրը»։ Սոցիալիզմը իբրև իրական հողից ծլած ու ծաղկած իդեալիզմ, իբրև մի նոր բարձր, ազատարար ու համամարդկային ուսմունք պէտք է տիրէ մարդկութեան լաւագոյն տարրերին։ Այսպիսով- միայն սոցիալիզմը իբրև բոլոր կարգի ճնշուածների ու շահագործուածների ազատարար շարժում կտիրէ աշխարհին։

Ահա այս ընդհանուր կուլտուր-տընտեսական նախապայմաններում միայն կարող է աշխատաւորութիւնը դիմել դէպի սոցիալիզմ։ Այդ պայմաններում միայն նա կարող է ազատ ու նպատակայարմար կերպով գործածել իր միակ զէնքը — անողոք ու անարգել դասակարգային կռիւ մղելը, որ սոցիալական բարեւորոգումներով, տնտեսական ու նաև քաղաքական գործադուլներով հասատատէ նրա քաղաքական տիրապետութիւնը դիկտատուրան։

Բովանդակ աշխատաւորութեան քաղաքական տիրապետութիւնը սոցիալիստական յեղափոխութեան նախապայ-

մանն՝ սա գլխաւոր մոմենտն է լինելու։ Իշխանութիւնն իր ձեռքը ձգելով գիտակից աշխատաւորութիւնը պէտք է վերջնականապէս և ամբողջովին ազատագրէ իրեն նաև տնտեսապէս։ Նա պէտք է վերացնէ մասնաւոր սեփականութիւնը և համայնական սեփականութիւն հաստատէ—աշխատանքի կապիտալից ազատագրութեան վերջին ակտը պէտք է կատարէ։

Ուրեմն աշխատաւորութեան քաղաքական իշխանութեան գլուխ կանգնելը սոցիալական եղաշրջման ազդանշան է լինելու։ Նորմալ պայմաններում ծընունդի ու երկունքի այս վերջին ակտը անցաւ ու անարիւն պէտք է անցնի։ Եթէ միայն իշխանութեան գլուխ անցնելը կատարուել է բնականաբար ու անհրաժեշտաբար, եթէ բոլոր սոցիալ-քաղաքական բդանները զարգացել են բաւականին*), ապա մնում է մի-

---

*) Իսկ երբ աշխատաւոր դասակարգը ժամանակից վաղ, իբեալ կուլտուր-տնտեսական պայմաններից առաջ է իշխանութեան հասնում՝ ապա

այն վերջին օրինական ակտերով փոխել դրանց ֆունկցիաներն ու գործողության ձևերը և անցնել սոցիալիստական կեանքի։ Արդէն իսկ սոցիալօրէն գործող օրգանները կսկսեն

դա վերջանում է նրա պարտութեամբ, ինչպէս օրինակ «Պարիզեան կոմմունան» և «Սովէտների բոլշևիկեան իշխանութիւնը»։ Կապիտալիստական կարգեր և պրոլետարիատի դիկտատուրա անյարիր և անհաշտ բաներ են։ Քաղաքական իշխանութիւն և տնտեսական ստրկութիւն (Կ. Մարքսի) հակամարտ ու հակասական դրութիւններ են։ Հակասութիւնից դուրս գալու համար պրոլետարիատը պէտք է «սոցիալիստական» քաղաքականութիւն վարէ, պէտք է վերացնէ իր տնտեսական ստրկութիւնը. իսկ դա նշանակում է կտրել իր ոտի տակի ճիւղը, երբ հասարակական կեանքը այդչափ զարգացած չէ։ Նման սոցիալիստական «փորձեր»ը կատար ալ փորձանքներ ու դժբախտութիւն են դառնում աշխատաւոր դասակարգերի համար։

սոցիալիստորէն գործել։

Էսպէս և փաստորէն համայնական արդիւնագործութիւնը կդառնայ համայնական սեփականութիւն։ Այսպէս աստիճանարար ու օրգանապէս զարգացած, սոցիալիզմի համար տնտեսապէս ու հոգեբանորէն—օբեկտիւ ու սուբեկտիւ կերպով—հասունացած հասարակութեան մէջ մասնաւոր սեփականութեան վերացումը լոկ մի յայտարարութեան և դեր ի փոփոխութեան արժէք կու ենայ։

Ահա այս մոմենտն է, որ կոչւում է «սեփականազրկողներին սեփականազուրկ են անում», որի մէջ սոսկալի ոչինչ չի լինի Սոցիալիստական հասարակութիւնը այնքան ազնիւ ու գիտակի կլինի, որ նա զերծ կլինի ամեն աւելորդ, անտեղի խստութիւններից ու անարդարութիւններից։ Ընդհակառակը. մենք վստահ ենք, որ օբեկտիւ ու սուբեկտիւ կերպով զարգացած և սոցիալիստորէն դաստիարակուած աշխատաւորութիւնը տոգորուած կլինի արդարութեան. հաւասարութեան և եղբայրութեան վսեմ գա-

զափարներով։

Սոցիալիզմի գաղափարի կուլտուրական արժէքն ու բարոյական մեծութիւնը նրա մէջ է, որ դա որև է դասակարգի տիրապետութեան, ուրեմն նաև նեղ դասակարգային բարոյականութեան ու իդէալների չէ ձգտում։ Դա սոսկ դասակարգային կոիւ չէ որևէ դասակարգի դէմ. աշխատաւոր դասակարգերին դասակարգային կոիւը առհասարակ դասակարգայնութեան դէմ է։ Դրանք ձգտում են վերացնել դասակարգային տնտեսական տիրապետութեան հետ նաև դասակարգային մօրալն ու հոգեբանութիւնը և հաստատել ընդհանուր մարդկային բարոյականութիւն, պատարեալ արդարութիւն և իրաւունք։

Ուստի և ոչ մի հիմք կայ սոցիալիստական հասարակութեանը մեղադրել նեղ դասակարգային շահերի ու ձգտումների մէջ։ ա այն հասարակութիւնը կլինի, որ հիմնուած կ ինի կատարեալ Արդարութեան ու Ճշմարտութեան և իրական Հաւասարութեան ու Եղբայրութեան վրայ։ Այդտեղ յարգ-

ւած կլինի ամեն մէկի իրաւունքը և ապահովւած իւրաքանչիւրի աշխատանքը։ Բնականաբար այդ արդարադատ հասարակութիւնը չէ կարող անարդար ու անիրաւ վարել նաև կապիտալիստական կարգերում ա լասերւած և աշխատնքի համար անպէտքացած դժբախտների հետ։ Քանի որ սոցիալիստական յեղափոխութիւնը կատարեալ ազատութիւն և երջանկութիւն է բերելու բոլոր կարգի դժբախտներին ու տանջւածներին, ապա դրանից վախենալու ոչ մի հիմք ունեն նաև այդ կարգի դժբախտները։

Ահա թէ ինչպէս ե՛ք մենք հասկանում սոցիալիստական յեղափոխութիւնը — համաշխարհային պատմութեան այս ամենամեծ ու անօրինակ յեղաշրջումը, որ մի նոր կուլտուրական դարեշրջան պէտք է լինի ամբողջ մարդկութեան համար։



ԼՈՑՍ ԵՆ ՏԵՍԵԼ «Աշխատաւոր»ի գրադարանի գրքոյկները.

1. Ե Բրեշկո.Բրեշկովսկայա. — Ինչպէտք է անել Հիմնադ. ժող. 5 կ.
2. Ն. Ա. Ռուբակին։—Հողի սեփականութիւնը և համայնական սեփականութիւնը 10 կոպ.
3. Վ. Խորեանի.—Ինչ է սոցիալիզմը. գինն 15 կոպ.
4. Ժ. Ժորես.—Խաղաղութեան գաղափարը. գինն է 10 կոպ.
5. Մեր ծրագիրը—Հայ Յ. Դաշնակցութեան ծրագրի պարզ բացատրութիւնը)—գինն է 20 կ.
6. Կարրելիւկ.—Նոր լերան քարոզը, թարգ. Տ. Յ. 10 կ.
7. Վիլհելմ Լիբկնեխտ.—Սարդերը և ճանճերը, գինն է 10 կ.
8. Լիբին.—Ինչ է Հիմնադիր ժողովը Ռուս. թարգ. օր. Լ. Յարութիւնեան գինն է 10 կոպ.

9. Վ. Խորէնի.—Ե՞րբ և ինչպէս պէտք է լինի սոցիալիստական յեղափոխութիւնը. գինն է 50 կ.։

10. Պ. Իսկուեւիչ.—Աշխատաւորների միջազգային միութիւնը։ (Ռուսերէնից փոխադրեց Ռուսօճ. գինն է 20 կ.։

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

Դիմել՝ Тифлисъ, редакція «Ашхатаворъ», Гановская ул. № 3.